

Հ. Խոջիկ
ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻՆ

ԵՒ


(1)

Ի Ի Բ Տ Ա Գ Ե Ր Ը

ՅԱՀԵԼՈՒԱԺ

ԵՎՀԵՔՍԱՆԴՐԻ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ ԿԵՓԱՆԵՐԲ

Կ. ԿՈՍՏԵՐԵԱՆ 8



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ճպարան Մ. Շարամեհ, Նիկոյ. փ. ս. 21

1898

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1990 ՀՆԴ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՅՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

15 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

8281

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՆԹԱՄԱՐՑԻՆ


ԵՒ

Ի Ի Ր Տ Ա Վ Դ Ե Ր Ը

ՅԱԻԵԼՈՒԱԺ

ԱՊՀՔՍԸՆԴԻՐԻ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ ԿԸՓԱՆԵՐԸ

Կ. ԿՈՍԵՆԵԱՆ 8




Թ. Ի Ֆ Լ Ի Ս

Ճպառաճ Մ. Շարամէի, Նիկոլ. փ. տ. 21

1898

Дозволено цензурою Тифлисъ, 22-го Мая 1898 г.


Уголок
273



Ա. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ

Բ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑՈՒ ՏԱՆԵՐԸ

Գ. ՅԱԻԿՈՒԱԾ



ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՑԻ

1515 – 1569 թ.

SEARCHED
SERIALIZED
INDEXED
FILED

ԳՐԻԳՈՐ ԱՂԹԱՄԱՐՅԻ

„Մի լար, պուլպո՛ւլ, բո՞ վարդն կուգայ:“

Գ. ԱՂԹ.

Հայոց մէջ միևնոյն ժամանակում երկու բանաստեղծ կաթուղիկոսներ հռչակուեցան ԺԶ. Դարում՝ մէկը Սոոյ աթոռի վերայ, միւսն Աղթամարու: Այն ինչ մէկի արևը խոնարհում էր դէպի մուտք, միւսինը նոր էր բարձրանում հորիզոնի վերայ: Առաջինն էր Թլկուրանցին Յովհաննէս¹⁾, որ վախճանեցաւ 1525 թուին, իսկ երկրորդը Գրիգորիս Աղթամարցին: Վարդի և սոխակի այս կրակոտ երգիչը, ո՛ գիտէ, Երբ եւ ինչպէս թողեց աշխարհն և առանձնացաւ Վանայ ծովի մենաւոր կղզու վերայ կրօնաւորելու, և, ի վերջոյ, հասաւ նոյն իսկ Աղթամարու կաթուղիկոսական աստիճանին: Մեզ յալտնի չեն ոչ նորա ծննդեան ժամանակն և ոչ

¹⁾) Յովհաննէս Թլկուրանցին և իւր տաղերը, Թիֆլ. 1892.

կրթութեան հանգամանքները¹⁾: Նորա երգերից
մէկն հիւսուած է 1515 թուին. այդ տեղ երգիչն
ինքն իրեն վայ է տալիս՝ աշխարհիս վերայ մոլո-
րուելու համար և յորդորում է իրեն՝ դարձի գալ
և ապաշխարել. կարծելու է, որ այդ ժամանակ
երգիչն արդէն կրօնաւոր էր, բայց ոչ կաթուղիկոս.
զի մէկ ուրիշ ոտանաւորի մէջ, պատմելով Խթա-
լեցի Աստուածատուրի նահատակութիւնը, որ եղաւ
1519 թուին, երգիչն իւր մասին ասում է, թէ
սպասաւոր և աշակերտ է մեծ րաբունապետ Գրի-
գորի. թէ ում մասին է խօսքը, դժուարանում ենք
որոշել, անշուշտ, Աղթամարու միաբան վարդա-

¹⁾ Հայերգի ժողովողն Արիստակէս վարդապետ Տէվկանց մի յիշատակարան է հրատարակել Գրիգորիս Աղթամարցու մասին, որ գրուած է Աղթամարում 1602 թուին. այդ յիշատակարանից երեսում է, որ Աղթա-
մարում երկու Գրիգորիս է եղել կաթուղիկոսական
աթոռի վերայ, որոնցից մէկը՝ փոքր Գրիգորիսն՝ ու-
նեցել է իմաստասէր մակդիրը. Տէվկանցի յիշատա-
կարանի միւս մանրամասնութիւններն իսկապէս փոքր
Գրիգորիսին են վերաբերում և նա սխալմամբ շփո-
թել է փոքրին մեծի հետ (տե՛ս Հայերգ ԺԲ – ԺԴ).
Նոյն այդ փոքր Գրիգորիսին են վերաբերում և հանգ.
Սրուանձտեանի հաղորդած յիշատակարանները (տե՛ս
Թորոս Աղբ. 262, 266), Որքան կարող ենք դատել
մեղ ծանօթ յիշատակարաններով, փոքր Գրիգորիս ժա-
մանակակից է եղել ո. Էջմիածնի Դաւիթ և Մելքի-
սեդ կաթուղիկոսներին և հովուել է մօտաւորապէս
մինչև 1610 թուականը:

պետներից մէկն է ալդ մեծ ըաբունապետը¹⁾, ո-
րին աշակերտել է Աղթամարցին. այսպէս են նորա
խօսքերը.

Առ մեծ ըաբունապետն ճառս յարմարի
Որ և անուն նորա Գրիգոր լորջորջի.
Սորին սպասաւորէ և աշակերտի
Գրիգորիս, մականունս է Աղթամարցի»:
Ապա դարձեալ իրենից իմանում ենք, որ իւր
տաղերից մէկն լորինել է Աստուածատուր Մեծոփե-
ցու խնդրանքով Հայոց 972 և Փրկչական 1523
թուին. ահա նորա խօսքերը.

«Գերի Գրիգոր անլիշելի
Եւ անպիտան Աղթամարցի,
Սէր աշխարհիս սուր Երկսալրի,
Հոգիս նովաւ վիրաւորի
Աստուածատուրն Մեծոփեցի
Յինէն խնդրեաց եւ ես գրեցի
Թշվական հայոց ինն հարիւր
Եօթանասուն ւ Երկուք ալլ իւր»:
Այնուհետև Վարագալ վանքի միաբան Կիրա-

¹⁾ Հ. Տաշեանի ցուցակում (եր. 796) յիշւում
է մի ոտանաւոր «Այբէն մինչև ի Քէն» և այլն. ար-
դեօք այդ ոտանաւորը Գրիգորիս Աղթամարցին է յօ-
րինել, ցուցակից չիմացուեցաւ. այնտեղ կան և այս
խօսքերը. «Գրիգոր մեծ ըաբունի առ քեզ գրեցի ես»:

կոս վարդապետի լիշտակարանից, որ գըռւած է մի ձեռագիր աւետարանի մէջ 1569 թուին, իմանում ենք, որ այդ տարին ս. Էջմիածնի կաթուղիկոսն էր Միքայէլ, իսկ Աղթամարինը Գրիգորիս, որ մեր երգիչն է, ինչպէս որ ցոլց են տալիս գրչեալ տաղարանների մէջ գըռւած նորա տաղերի վերնագիրները ¹⁾:

Այսպէս ուրեմն սոյն հատուկտոր տեղեկութիւնները գաղափար են տալիս մեզ այն ժամանակամիջոցի մասին, երբ ապրում էր Աղթամարցին. այս չորս թուականներից (1515, 1519, 1523 և 1569) կարելի է մակաբերել, որ Աղթամարցին ծնուել է Ժ. դարի վերջերում, երիտասարդական հասակն անցուցել է ԺԶ. դարի սկզբներում, իսկ կաթողիկոսական աթոռին հասած պիտի լինի նոյն

¹⁾) Կիրակոս վարդապետի սյդ աւետարանը գըտնում է Թէմիրխան. Շուրայի Հայոց եկեղեցում. յիշատակարանի մեզ հետաքրքրօղ մասն այսպէս է. «Ի Ռֆլամի ՚ի հայրապետութեան տեառն Մուխայէլ կաթուղիկոսին սուրբ աթոռոյն Էջմիածնի և Գրիգորիս կաթուղիկոսին Աղթամարայ և ի տեղապահութեան Շամիրամակերտին Խոսրով փաթիշահին, որ յայսմ ամիսկիզբն արար պարսպին Վանայ քաղաքին. սխալանաց գրիս անմեղադիր լերուք, աղաչեմ, զի ի դառն և ի նեղ ժամանակիս գրեցաւ, որ փախուցեալ եմք ի ձեռաց Քրդացն, և կամք ի ղարիպութեան, և կար մեր այս էրա:

Դարի Երկրորդ քառորդի մէջ կամ աւելի ուշ. իսկ թէ Երևէ վախճանել, լայտնի չէ. նորան լազորդել է (թերեւ անմիջապէս) փոքր Գրիգորիսը նոյն ժա. Դարի վերջերում, ուստի և լիշտակարանները շփոթում են Երկուսի ժամանակներն, և դժուար է իմանալ առաջինի մահուան տարին:

Բացի Թղկուրանցի Յովհաննէսից Աղթամարցուն ժամանակակից են Թոխաթցին Մինաս (1563 թ.). Սեբաստացին Յովհասափ (1548 թ.), Խառակօնիսեցին Քուչտկ Նահապետ (1583 թ.) և այլ Երգիչներ¹⁾. սոցա ժամանակակիցներն էին նաև Աբգար Եւդոկիացին, որ Միքայէլ Սեբաստացու նախաձեռնութեամբ պատճառ եղաւ 1567 թուին հայոց գիրն առաջին անգամ մամուլին լանձնելու, Ղուկաս Կեղեցին, որ, ինչպէս լիշտակարանն ասում է, 1557 թուին «զՀռոմալեցւոց տօմարն ի լոտք հանեց» և Յովհաննէս Ծարեցին, որ գրեց Աղուանից աշխարհի պատմութիւնն (1573—1600 թ.).

Որքան և սակաւ գիտենք սոցա բոլորի կեանքի և գործունէութեան մասին, այնուամենայնիւ լայտնի է, որ նոքա ապրել և գործել են ծանր աղէտալի ժամանակների մէջ։ Ալդ ժամանակամիջոցումն էր, որ նորոգուած էր Պարսից և Օսմանցւոց մրցումն Հայոց Երկրում։ Սէլիմ սուլթանն և շահ Իսմայէլը

1) Տես Նոր Ժողովածու, Ա—Գ. պրակ. Թիֆլ.

Զալտրանի դաշնադրութեամբ 1515 թուին վերջ
դրին իրենց կոհւներին, բաժանելով Հայաստանի
գաւառներն իրենց մէջ. ալդ դաշինքն երկու տէ-
րութիւնների համար խաղաղութեան ուխտ էր,
բայց ոչ ժողովրդի անդորրութեան գրաւական. ո-
րովհետեւ երկուսի օահմաններումն էլ շարունակ
տեղի էին ունենում հալածանքներ և հարուածներ,
որոնք խլում էին ժողովրդից կեանքի ապահովու-
թեան լոյսը. Ալդ աղետալի շրջանի մէջ էր, որ Սէ-
լիմսուլիմանն 1517 թուին և նորա լաջորդ Սու-
լէլիմանը 1543 թուին հրամայեցին իրենց բանակի
համար Բարձր Հայքի և այլ կողմերից քրիստոնեալ
մանուկներ ժողովել. կամաւ չըտուող մալրերի գըր-
կից բռնի կորզում էին արու դեռահաս զաւակնե-
րին՝ Կ. Պօլիս ուղարկելու համար. Դերջանեցի Մա-
ղաքիա վարդապետին լաջողեցաւ սակայն աղաչել և
համոզել սուլթանին դադարեցնելու ալդ անիրաւ
մանկաժողովը. Ապա տեղի ունեցաւ պարսից շահ
Թահմազ Ա. թագաւորի արշաւանքն հայոց երկրի
վերալ և ասպատակութիւնն 1550 թուին, Սուլթան
Սուլէլիմանի և Թահմազի փոխադարձ ընդդիմադրու-
թիւնների արդիւնքն այն եղաւ, որ մէկը միւսին
հակառակ նեղում էին ժողովրդին և ստիպում էին
տուն տեղ թողնել և փախչել դէպի մի այլ ապա-
հով վայր ինչպէս ալդ իմանում ենք և Կիրակոս
վարդապետի լիշտակարանից, որ ասում է. «ի
դառն եւ ի նեղ ժամանակիս զրեցաւ, որ լիախու-

ցեալ եմք ի ծեռաց քրդացն, եւ կամք ի ղարի պութեան։ Բոնակալները, ժողովրդի ալդակիսի փախուստը տեսնելով, իրենք ևս խմբերով գերի էին վարում հայերին դէպի իրենց տէրութեան հեռաւոր կողմերը։ Այսպիսի հալածանքներն, ի վերջոյ, կընքուեցան մեծն Շահաբասի ձեռնարկած բոնի գերեվարութեան և Արարատեան աշխարհի աւերման ամենամեծ աղէտով, որտեղի ունեցաւ 1605 թուին¹⁾։

Այսպիսի ծանր աղէտներից զատ՝ պակաս չէին և այնպիսի բարբարոսական խստութիւններ, որոնք իւրաքանչիւր գաւառի բոնաւոր իրաւունք էր համարում գործ դնել իւր ժողովրդի վերալ, համարելով նորան իբրև «անմռունչ ոչխար վարեալ ի սպանդ»։ ալդ բազմօրինակ և քստմնելի հարուածների մասին լսե՞նք, օրինակի համար, թէ ինչ են ասում Աղթամարցուն ժամանակակից լիշտակագիրներն իրենց հակիրճ և որոշ տեղեկութիւններով։ «1533 թուին զԾեռւ վանաց աբեղէն ալրեցին»։ «1535 թուին ի Շնքուռկու գիւղէն երէց մի ալրեցին»։ «1545 թուին լԱրզրում քաղաքի զազատորդիսն 70 հոգի ջարդեցին ի մէկ գիշերի, և մեծ աղէտ եղեւ։ ևայլն։ Անշուշտ, այսպիսի աղէտներն ունի աչքի առջև Դրիգորիս Աղթամարցին, որ ինքն էլ 1523 թուին կարճ խօսքով ասում է։

¹⁾ Տես Առաքել Դաւրիժեցու Պատմ. գլ. Ե.

Երթայր զիւրովի) . վասն այսորիկ ապա
անձնապահ լիներ Նիկիաս առաջնորդ կալ
'ի նահատակութիւնս գործոց՝ որ կարի
գժուարինք կամ որ գուզնաքեայք : Իսկ
առաջնորդ երբէք կացեալ, ցանդ յան-
գորրու մեծապէս կացուցաներ զիրսն . և
գեղեցկապէս 'ի գլուխ տարեալ, ոչ ան-
ձին ինչ իմաստութեան գրէր զգեղեցիկ
զելսն և ոչ զօրութեանն, և ոչ դարձեալ
առաքինութեանն, այլ զամենայնն ըն-
ծայէր բախտին . դիմէր ապաւիներ առ
դիսն՝ խոյս տուեալ 'ի նախանձուէ փա-
ռաց անձինն . և քաջ իսկ վկայէին և ար-
դիւնքն գլխովին : Քանզի և յաղէտսն Ա-
թենացւոց 'ի բազումն և 'ի մեծամեծու՝ ոչ
ինչ բաժանորդ եկացնա . այլ 'ի խորտա-
կիլ նոցա 'ի Թրակիա 'ի Քաղկիդացւոցն,
էին յայնժամ զօրավարք Կալիադէս և
Քսենոփոն : Իսկ 'ի հարուածել նոցա յե-
տողացւոց անտի, զօրավար կայր Դեմոս-
թենէս . իսկ և 'ի տապաստ անկանել հա-
զարաց 'ի նոցանէ 'ի Դեղոս, առաջնորդ
կայր Հիպակուրատէս :

Բայց և 'ի սրածութեանն յայնմիկ՝ մե-
ծապէս յանցաւոր գտաւ Պերիկոլէս, որ 'ի
պատճառս պատերազմին առեալ փակեալ
'ի քաղաքին զշինակոն որեարն, առթեաց
զժանտախտն առ 'ի փոփոխութենէ վայ-
րացն և ընդաբոյս քաղաքավարութեան
կենաց նոցա : Ապա Նիկիաս յայս ամե-
նայն աղէտս անբամբաս մնացեալ, զօրա-
վար կացեալ զօրուն՝ առ զկիտերա կղզի

ըողանալով բառ գտնել գովելու չնաշխարհիկ մի
պատկեր, մի գեղեցկութիւն, որ յափշտակել է
նորա միտքը։ Ո՞րպիսի տարօրինակ համեմատու-
թիւններ, ո՞րպիսի անսովոր նմանութիւններ, ո՞ր-
քան առատ կրկնութիւններ է գործ դնում երգիչը,
որպէս զի կարողանալ լիուլի բաւականութիւն տալ
իւր զգացմունքին և իւր մտքի թռիչներին, բայց
միշտ անզօր և միշտ տկարանում է նորա լեզուն
այն ասելու, ինչ որ նորա սիրտը խօսել է կամե-
նում։ Այսպիսի տկարութեան արտայայտութիւնն
է, անշուշտ, որ երգիչն իւր չքնաղ պատկերի լիա-
կատար նկարագրութեան համար դիմում է թէ ժո-
ղովրդական ձևերին, թէ օտարազգի՝ պարսիկ, և ա-
րաբ՝ բառերի օժանդակութեան, թէ սուրբ գրքին
և թէ ալլ շատ հնարների։ Այս կողմից Աղթամար-
ցին հայոց հետաքրքիր երգիչներից մէկն է։ Որ-
շափ և սակաւաթիւ են մեզ ծանօթ նորա երգերը,
այնուամենայնիւ գէթ ալդ չափով կարող ենք ա-
սել, որ նա շատ խոր զգացմունքների տէր է և
բարբառի ճոխութեան մի նշանաւոր ներկայացուցիչ
իւր ժամանակի արուեստակիցների մէջ։ Արտայա-
տութեան ձեւերով նա բաւականին նման է Յով-
հաննէս Թղկուրանցուն։ կեանքի պայմաններն և
իւրաքանչիւրի վիճակն էլ իրարուց շատ տարբեր
չեն. դժուար է կարծել որ Աղթամարցին ծանօթ
չլինէր Թղկուրանցու տաղերին. մի քանիսի հա-
մեմատութիւնից կարելի է տեսնել, որ երկուսն էլ

միանման ոճեր և դարձուածներ են գործ դնում
իրենց մի քանի տաղերի մէջ:

Աչքի առաջ ունենալով Աղթամարցու տաղերի
այս համառօտ նկարագիրը, մենք կըտեսնենք, որ
նորա տաղերի բովանդակութիւնն այն ժամանակի
ժողովրդական ընդհանուր թշուառ վիճակին բնաւ
համապատասխան չէ երեսում։ Ժողովրդին «խան-
ձում են», գերի են վարում, երեխաներին մալրերի
գրկից բռնի խլում են, հաւատափոխ անելու, կե-
ղեքումներն այնքան լաճախում են, որ Քրդերի
ձեռից վարդապետներն անգամ փախչում հասնում
են հեռու երկիր «զարիպութիւն» քաշելու. մեր եր-
գիչը կարծես ալդ չի տեսնում. նա խօսում է վարդի
ու սոխակի հետ, գովում է իւր սիրած գեղեցիկ
պատկերը և չի դադարում մէկի փոխարէն մի քանի
սիրու երգեր հիւսելու։ Որքան և կղզիացած լինէր
նորա կաթուղիկոսարանը մենաւոր Աղթամարի վե-
րալ, որքան և Վանալ ծովի ալիքները պաշտպա-
նէին ալդ կղզին ամեն տեսակ պատահական կամ
կարգաւորեալ ճնշումներից ու հալածանքներից և,
վերջապէս, որքան էլ որ ժողովրդի լարաբերութեան
պալմանները դժուարացած լինէին կղզու հետ, այ-
նուամենայնիւ անկարելի է մտածել, որ տասնեակ
տարիներ տեսող հարստահարութիւնները, որոնք
միմիայն ողբի և լուսահատութեան առիթ էին լի-
նում ժողովրդի մէջ, անծանօթ մնալին Աղթամար-
ցուն և տպաւորութիւն չգործէին նորա վերալ,

քանի որ, ինչպէս տեսանք մի օրինակից, երգիչն
ինքն է յայտնում մեզ, թէև մի տողով, այդ ցա-
ւերի մասին։ Աղթամարցու նման կրակոտ երգիչը,
որ միևնոյն ժամանակ իւր երգերի մէջ ինքն իրեն
կշտամբել գիտէ, մերթ «խև Աղթամարցի» «սև Աղ-
թամարցի» «լիմար Աղթամարցի» անուանելով իրեն
և մերթ «մեղաց ծառալ» «դու բարեաց անջան», չէր
կարող անհաղորդ մնալ ընդհանուր աղէտին և լռել
այն ժամանակ, երբ կարողութիւն ունէր սիրոյ և
այլ երգեր յօրինելու։ Չնայելով այս ամենին, մենք
տեսնում ենք, որ ժամանակի դրոշմը, կարծես,
պակաս է նորա երգերի վերալից. կարծես թէ, երբ
ամեն տեղ լալիս էին, հառաջում էին, փախչելու
ժամանակ անգամ չէին գտնում, Աղթամարցին ինքը
մէնակ ապրում էր փափկութեան դրախտի մէջ,
ուր նորա աչքի առաջ միմիայն ընտիր ընտիր ծա-
ղիկներ, չնաշխարհիկ թռչուններ, անուշահոտ
խնկեր, անգին քարեր և գեղանի դէմքեր էին ներ-
կայանում։

Այս հակասական երևոյթը մենք շեշտելով ար-
ձանագրեցինք, զի մեր համոզումը չէ, որ Աղթա-
մարցին իւր յայտնի երգերի հետ միասին մեզ յի-
շատակ թողած չլինի և իւր տպաւորութիւնները
ժամանակակից աղէտների մասին։

Այժմ տեսնենք թէ Աղթամարցին ինչպէս է
յայտնում իւր մտքերն ու գաղափարները։ Նորա
տաղերի մէջ գեղասիրական ճաշակի արտալայտու-



թիւններն և առհասարակ գեղեցկի պատկերը, կարծես, թէ պայմանական են: Ինչ որ ժԶ. դարու Հայոց կամ արեւելցւոց ճաշակին ազնիւ և հաճելի էր, թերևս այսօր մեզ համար նոյնը խորթ և պաղ թուի. բայց և այնպէս մենք տեսնում ենք, որ գեղեցկի գաղափարն այն ժամանակ նոյնպէս սիրելի և դրուատելի է եղած ինչպէս և այժմ: Աղթամարցին իւր տաղերից մի քանիսի մէջ հանդէս է բերում իւր սիրելու գեղեցկութիւնը. չունենալով հընար այդ գեղեցկութեան չափը որոշելու, նորա պատկերն անուանում է «աստուածագիծ պատկեր»: և ապա թուում է նորա նըբութիւնները, որոնք նա չի կարողանում լիուլի արտալայտել, ուստի և ստէպ ստէպ փոխում է համեմատութեան առարկաները նոյն նպատակի համար. այսպէս մի անգամ նա ասում է.

«Դու քաղցրահայեաց փթթեալ վարդենի...»
Ուներդ է քաշած քան զթափած թուր»
Թարթափդ է քո թեք քան զնշտար սուր¹⁾)»:

Այս համեմատութիւնները նորան չեն գոհացնում. նոյն տաղի մէջ նոյն գծերը մի այլ տեղ այսպէս է որոշում.

«Ուներդ է կամար որպէս զաղեղնակ

¹⁾) Խօսքերը զանազան տեղերից են ընտրուած երրեւ օրինակ:

Աչերդ է պայծառ որպէս զծովակ.
Թարթափդ է խանչար, ինքն պողպատ զուտ.
Ալտով զիս հարիր և արիր խուրտ ու մուրտաւ:
Ուրեմն սիրելու ծովակի նման պայծառ աչերի
վարդի նման բացուած հայեացքը կարող է մար-
դուս սիրտը ծակել նշտարի նման սուր թերթիշ-
ներով, որոնք միևնուն ժամանակ զուտ պողպատէ
գաշուններ են. Ալսպէս է մտածում Աղթամարցին:
Բայց շարունակենք ամբողջացնել նորա սիրելու
պատկերը տեսնելու համար թէ ինչպէս են ներ-
կայանում մեզ նորա միւս գծերը ¹⁾:

Քան զշամբայ եղէզն ելեր ես շիտակ.
Քո մէջքն է բարակ քան զուռի վարոց.
Նրթունքդ է քո լար, կլափդ է ամպար.
Սիպտակ ատամունք մարգարտէ շարոց.
Լեզուդ է շիրին քան զՄսրայ շաքար.
Երբ որ դու շարժիս ոտօքդ ըռովան,
Ուր որ դադարիս այնտեղն է պօստան».

Սոյն այս արտայայտութիւններն ուրիշ տաղի
մէջ Աղթամարցին այս խօսքերով է անում.

Նրթունքդ է շաքար,
Խօսունքդ զանդ է,
Լեզուդ ի բերանդ
Անգին չուհար է.
Ուներդ է քաման,

¹⁾) Խօսքերը զանազան տեղերից են ընտրուած:

Թարթափդ է քո բիր,
Սուրաթդ է սատաֆ, ևալն.

Քանի որ այստեղ շրթունք, խօսունք և լեզու
իբրև հոմանիշ են գործ դրուած, կարծես, թէ ղանդ
ու շաքար և ջուհար մակդիրներն իրար չեն բըռ-
նում, նմանապէս աղեղնաձև (քաման) ունքերին
անյարմար է գալիս զիր թարթափը, իսկ սատաֆ
սուրաթ դժուար թէ Հայոց մէջ հասկանալի և հա-
սարակեալ պատկեր լինի, երևի, փոխառական է
կամ կրկնութիւն մի օտար երգի խօսքերից։ Բարե-
բաղդաբար Աղթամարցու տաղերի մէջ այսպիսի
անհարթութիւններն յաճախ չեն կրկնում։ Ընդ-
հակառակը մեր երգիչը շատ տեղ հաւատարիմ է
մնում այն գեղասիրական ճաշակին, որ երգ եր-
գոցի աղդեցութեան տակ հին ժամանակից սովո-
րական էր դառել մեր կրօնական բանաստեղծու-
թեան մէջ, և ինքն իւր կրակոտ բնաւորութեամբ
և արևելցու վառվուն խանդով, կարծես, աւելի
զարդարում ու նըբութիւն է տալիս ալդ ճաշակին,
շատ տեղ հրահանգուած նոյն իսկ Ա. Գրիգոր Նա-
րեկացու տաղերից ¹⁾)։ այսպէս է յօրինել նա իւր

¹⁾ Մի քանի ձեւերը համեմատ են և Քուչակ՝ Նա-
հապետի արտայայտութիւնների հետ, ենթադրելու է,
որ երկուսի աղբիւրն էլ մի է. տե՛ս Նոր ժողովածու,
Ա. 71. տե՛ս Նաեւ Նարեկացու տաղ «Երգ զարմա-
նալի» և այլն։

տաղերից մէկը, որ եթէ մի գրչեալ տաղարանի
վերնագրին նայենք, նուիրուած է ս. Աստուածած-
նին, իսկ եթէ երգի ընդհանուր բովանդակութեանը
նայենք, ոչ այլ ինչ է, եթէ ոչ Աղթամարցու գե-
ղեցկի կատարելատիպը, թէև ոչ լրիւ արտայալ-
տուած. այս տեղ նոյն գծերը, որ վերևից մեզ ար-
դէն ծանօթ են, արտայալտուած են այսպէս.

«Արեգակնախ լլ գեղով լի
Լուսին» ի տասնուհընկէն.
Ոչեր ծով ի ծով ունիս...
Ուներդ է քաշած կամար
Զինչ գարնան աղեղն ի լամպէ.
Լեզուդ տապարզի շաքար,
Քո շրմունքդ վարդի թերթ է,
Աստղ վառ ի վառ պայծառ ,
Ելանես ի յառաւօտէ...
Վարդ ես վալելուչ գունով,
Ցող առնուս ի վաղորդայնէ,
Արևն երբ ի քեզ առնու,
Հիանալ ով զքեզ տեսանէ...»

Ինչպէս և գոված լինի Աղթամարցի «աս-
տուածագիծ պատկերը» դարձեալ բառերը պակա-
սում են նորա ամեն մի շարժումն, ամէն մի տպա-
ւորութիւնը նուրբ և կատարեալ արտայայտելու.
կարծես թէ չքնաղ պատկերի ճոխութեանն ամե-
նակին համապատասխան չէ մարդուս մտքի աղքա-

տութիւնը, կամ թէ մեր զգացմունքների առատութեան չափ առարկաներ չկան բնութեան մէջ, որ մեր միտքն արտայալտելու ժամանակ գոհացում տանք մեր սրտին։ Այս վիճակը ծանր է գալիս Աղթամարցուն։ Նա իրեն օժանդակ է առնում գրեթէ բոլոր ազնիւ տունկերն ու ծաղիկները, որպէս զի իւր սիրելու պատկերը լիուլի նկարագրէ։ այդ նպատակի համար նորա տաղերի մէջ հանդէս են գալիս՝ ծաղիկ նոնենի, պտուղ բարունակ, դալար ուռի, փթթեալ վարդենի, արմաւ, շուշան, նշդարենի, նոնենւոյ դրախտ, սալվի չինար, նոճի, մըտենի, նարընճի ծաղիկ, կալիսի (կասլի) տերև. ևայլն. իբրև հոմանիշ իւր սիրելի առարկայի, որի համար, ի վերջոյ, այսպէս է բարեմաղթում։

«Քան զգարնանալին մանուշակ հոտով..

Որպէս ճերմակ վարդ պայծառ և գունով.

Նորաբոյս ծաղիկ և տունկ նշենի,

Երեսդ է պայծառ քան զթեր վարդի,

Կարմիր և սպիտակ խնձոր անտառին,

Կիպարի, նոճի, կանանչ ձիթենի,

Նարինճ ու թուրինճ, տունկ պալասանի

Միշտ կանաչ կենաս քան զնշդարենի»։

Բայց բնութեան գեղեցկութեան այս երփներանգ զարդերը դեռ շատ սակաւ են երեւում երգչին։ նոցա պիտի ընկերանայ, անշուշտ, և օդը չափող և բնութիւնը կենդանացնող թռչունների

երամը, նոցա մէջ ընտիր և սիրելի թևաւոյներն
ամենքն էլ Աղթամարցու փայփալած գեղեցիկ սլատ-
կերին պիտի ծառալեն ու սպասաւորեն առանց կա-
րենալու դարձեալ լրացնել ամբողջի նկարագիրը.

«Բան զքաջ արծիւ բարձրագնաց ես,
Գեղեցիկ բազալ լաթիֆ ու թառ ես,
Փալլուն սիրամարգ ոսկէ փետուր ես,
Քաղցրածայն կաքաւ, մղրի սահրայ ես...»

Սոխակն ու արտուտը, գարնան ծիծեռնակը,
Խօսող թութակը բոլորն էլ նոյն սպասաւորութեան
մէջ էն արծուի հետ միասին. նոցա աջակցում են
անգին քարերը, բուրաւէտ խնկերը, երկնքի մոլո-
րակները, միով բանիւ ամբողջ արտաքին աշխար-
հը, որ դարձեալ տկար է երեսում երգչի զգաց-
մունքներն ամփոփելու. Այս պարագալի մէջ մի
քան միայն մնում է անհասկանալի թէ ի՞նչ է
ուզում ասել Աղթամարցին, երբ իւր մի քանի եր-
գերի մէջ լիշում է Միքայէլ Հրեշտակապետին, որ
մեզ տեսանելի աշխարհից չէ. իւր սիրելու համար
ասում է.

«Պատկերով պատուեալ քան զՄիքայէլ ես.
Սքանչելատեսիլ դիմօք Միքայէլ Հրեշտակն
ես միթէ...»

Միքայէլ Հրեշտակն քեզ պահապան...»

Եթէ այստեղ մի որեւէ տեղական աւանդութիւն
չէ Աղթամարցու հիմքը, կարող ենք մտածել, որ

նա տչքի առտջ ունի հրեշտակական դասը, որով-
հետև իւր սիրելի եւ չքնաղ պատկերի նմանութիւնն
երկրիս վերալ չի գտնում.

Զկայ քեզ նման ի յազգս մարդկան..

Ի մէջ հողեղինացս հրեղէն ես...

Մաքուր պատկերով նման հրեշտակի..

Սոսկալի վարսաւոր սրովբէ..

Այսպիսի ձևերով է նա որոշում իւր սիրելու
տեղն աշխարհիս երեսին. ուստի և կարող էր մտա-
ծել, որ հրեշտակների մէջ նա նման է Միքայէլ
հրեշտակապետին (քանի որ Գաբրիէլ հրեշտակա-
սլետի վերալ սովոր էին մտածել իբրև հոգէառի
վերալ): Եթէ այսպէս նայելու լինինք, յենք կը-
տեսնենք, որ Աղթամարցին իւր ընտրած պատկե-
րի գեղեցկութեան մասին միայն արտաքին նշան-
ներ չեն տալիս, այլ և ներքին. նորու համար ան-
ընական է թուում գեղեցկութիւնը մարդուս մէջ
միակողմանի տեսնել առանց նորա հետ կապուած
համարելու և ներքին կամ հոգեկան ազնուութիւ-
նը. այս է, որ շատ տեղ երգիչը յափշտակւում է
և իւր սիրելի պատկերին նմանեցնում է ոչ միայն
առաքինի մարդիկ և սուրբ տեղեր այլ և վերին
աշխարհը. նա ասում է.

«Վերնոց վեհագոյն և աշխարհի զարդ

«Ուշիմ և խոհեմ անօրինակ մարդ,

Տիպ և գաղափար Տեառն Աստուծոյ ես...

Դու սքանչելագործ քան Զօրաւոր Խաչ...»

Որքան գեղեցիկ է մարդուս սրտի սիրելին,
որքան չնաշխարհիկ և թանգ է նա մարդուս հա-
մար, այնքան մեծ ուրախութիւն է զգում մարդ
նորա ներկայութիւնից և այնքան աւելի մեծ վիշտ,
երբ նորան ձեռքից թողնում է։ Աղթամարցուն
ոգևորել է առաւելապէս այդ կրկնակի զգացմուն-
քը, որ նա շատ գեղեցիկ այլաբանութեամբ պատ-
կերացնում է մեր աչքի առաջ սոխակի և վարդի
օրինակով։ Արևելքին լատուկ ալս այլաբանութիւ-
նը միշտ ջերմ սիրոյ և անխարդախ հաւատարմու-
թեան գաղափարն է արծարծել ընկերական կեանքի
մէջ։ Արևելքը սոխակի և վարդի մէջ տեսնում է
այդ գաղափարի կատարելատիպը. բորբոքուած սի-
րոյ գուսանն է սոխակ և գեղեցկութեան քնքոյշ
և հազուագիւտ օրինակն է վարդ. ոչ ոք չի կարող
այնպէս ջերմ սիրել, ինչպէս սոխակը, և այնպէս
անվերջ սիրուիլ, ինչպէս վարդը։ Այս ոգևորու-
թեան առարկան է Գրիգորիս Աղթամարցուն հան-
դէու բերել իբրև կատարեալ աշուղ՝ իւր ժամանա-
կակիցների զգացմունքները զարթեցնելու։ Գարու-
նըն իւր կայտառ բնութեամբ այն երջանիկ ժամա-
նակն է, երբ վարդի գուսան սոխակը գալիս է ար-
գին, և բոլոր ծաղիկներն աւետում են վարդին նորա
գալուստը։

Բախացեալ պուլպուլ հաւին
Ընդ կանաչել վարդի թփին

Գնաց պուլպուլն երեր զղումըին
Թէ եկ և տես ըզելք վարդին։»

Այսպէս սկիզբն է առնում ընկերական կեանքի քաղցրութիւնը, որ ուրախութեան և վշտի մէջ հաւասարապէս անփոփոխ է մնում.

«Ի մէջ պաղչին վրան զարկին.

և ինքն էր ի քուն ի կոկոնին.

Կանչեց պուլպուլն զղազալնին,

Ուրախացաւ ի տես վարդին։»

Աղթամարցին այս տեսութեան ուրախութիւնն աւելի ճոխ պատկերացնելու համար՝ իւր մի ընդարձակ երգի մէջ նկարագրում է սոխակի սուգը վարդի բացակայութեան վերայ. նա ասում է.

Յետ գնալոյ վարդին, եկ պուլպուլն ալգին
Ետես թափուր զվրանն, քաղեցաւ հոգին։»

Սոխակի համար ալդ անտանելի հարուած էր,
որ ստիպում է նորան որոնել իւր վարդը, հարց ու
փորձ անել իմանալու, թէ ուր գնաց նա. որպիսի
ընական սուգ. խղճալին հարց է տալիս ալգուն թէ
«ինչու չպահեցիր իմ պատուական վարդին,

«Որ է ամեն ծաղկանց սալվար ու սուլթան,
Գունովն գեղեցիկ, հոտ անմահութեան »

Սոխակի կոկիծն այնքան մեծ է, նորա յուսահատութիւնն այն կէտին է հասնում, որ ցաւից
անիծում է այն տեղը, ուր մի ժամանակ իւր սրտի
սիրելին կար և ուր դարձեալ կարող էր երևել նա.

«Քակուիք քո ամուր պատն, դառնաս աւերակ.
Չորնայ ճիւղդ և տերեգ ծառոց շիտակ.
Ամէն ոտքն խաղայ ի քեզ համարձակ,
Վերնայ բուսն ու բանջար և ամեն կանաչ տակ.
Ակո՛ւք լորդախաղաց, մի՛ գնալք լառաջ,
Ծառեր, թօթափեցէք զտերև ձեր կանաչ...»

Բայց ի՞նչ շահ. այդ անէծքն աւելի ևս գըր-
գոռում է սոխակի սիրտը. նա ուզում է իմանալ,
թէ արդեօք ովեղաւայդ թշուառութեան պատճառը.

Լինիք թէ ալգեգործն արար զալս ընդ իս,
Տարեալ զվարդն լինէն, ցաւեցոյց զհոգիս..
Վախեմ հողմն սաստիկ ելաւ ահագին,
Ու վասն այն թօթափեցաւ տերեն վարդին...
Եւ կամ խորշակահար տապն արևին
Եհար թարշամեցոյց զգեղն վարդին...
Կարծեմ, եթէ ծաղկունքն արին հետ ինձ քէն,
Տարեալ հեռացուցին զվարդն լինէն...
Եւ կամ կարկուտ եկաւ ի սաստիկ ամպէն,
Եհար զնա անողորմ, կտրեաց ի թփէն...»

Սոխակի ալս հարցերին միայն ծաղիկներն են
պատասխան տալիս, թէ վարդից ոչ մի տեղեկութիւն
չունին. սոխակը թռչում է իւր օդաչու երամների
մէջ և հարցնում.

Թոչո՛ւնք, այսօր գիտէք թէ զի՞նչ գործեցաւ,
Զի վարդն վայելուչ լայգւոյս վերացաւ,

Միթէ տեսեալ էք դուք կամ լուեալ զհամբաւ.
Կամ գողն գողացեալ տարաւ թագուցաւ.»

Թոշուններին էլ անծանօթ էր վարդի անլայ-
տանալու պատճառը: Այստեղ սոխակի սուգը ճշշ-
մարտապէս ծանրանում է. նա յուսահատուած կան-
չում աղաղակում է, կարծես, ողջ աշխարհն իրեն
սգալից անելու.

«Ուր տարան վարդ, զքեզ, կամ ուր թագուցին.
Զիարդ մոռանամ ես զսէրն քոյին,
Խոցեցաւ սիրտս ու լերդս կոկծագին.

Ծաղկունքն թող հաւսար այսօր թառամին.
Իմ կեանքս է գէմ երազ, և ես երերմանի.

Եւ լուսն արեգականն ինձ խաւար թուի:

Եւ այս ծանր սուգը սոխակին այնքան է
տանջում, որ նա կարծում է, թէ այլևս ապրելու
չէ, որովհետև առանց վարդին նա կեանք չունի.

«Վախեմ թ' առանց վարդին յանկարծ մեռանիմ,
Կարօտով բաժանեալ ի հողն իջանիմ.

Թէ զարարածս ամէն վարդին փոխան տան,
Նա անարգ ինձ թուի, և ոչինչ, անպիտան.
Կամ դասք երգեցողաց երաժշտական
Քաղցրիկ եղանակեն, ինձ գուժ է և գան:

Բայց ով կարող էր վախճան դնել սոխակի սը-
գին, եթէ ոչ ալգեգործը, որին քաջ ծանօթ են
ընութեան օրէնքներն և հաւատում է, որ իւր ար-
գին պիտի վերստին կանաչի, և վարդի թուփին իւր

տեղում դարձեալ նոյն վրանը պէտք է լինի սոխակի համար, նա արդէն տեսնում է գարնան կարապետին. նորածիլ մանուշակը վաղուց արդէն զարդարում է նորա ալգին և բուրում է իւր անոլշ հոտը. նա շտապում է աւետիք աալու սոխակին, որ վարդի լառաջընթաց կարապետն արդէն եկել է և նշան է տալիս նորա դարձի մասին. նա ասում է.

«Մի լար, պուլպուլ, քու վարդն կուգայ.
Եկեալ է մանուշակն վարդին փիադայ.»

Այստեղ սոխակի սուզն ուրախութեան է փոխում, նորա անէծքները դառնում են օրհնութիւն, նորա սիրտը լցւում է վերակենդանութեան քաղցը լուսով. ահա նորա օրհնութեան գեղգեղը.

«Ալգի քո զարդարի, և ծաղկունքն ի նմա.
Պարիսպն նորոգի, և ի մէջն բըգայ.
Ամէն արմատք և ճիւղքն դալարանան,
Առնուն շաղ ի յամպոյն, և պայծառանան.
Շարժին քաղցըիկ հողմով և զուարճանան,
Եւ զհոտն տարածեն ի քիմս մարդկան.»

Ապա շտապում է վարդի գուսանն իւր սիրելուն մի նամակ գրել. երբ նամակը հասնում է վարդի դուռը, կանչում են հազրէվարդին, որ նորա դպիրն էր, և տալիս են նորան՝ ծաղիկների մեծ ժողովի առաջ կարդալու սոխակի թուղթը, ալդ մի այնպիսի գիր էր, որի մէջ սովորական հարց ու բա-

ըեից զատ սոխակն իւր ջերմ բարեմաղթութիւններն է անում և յայտնում է իւր զգացմունքներն ու ակնկալութիւնները.

«Քեզ ողջոյն գրեմ ես, սրտէ սիրելի,
Եւ հարցանեմ զանձնէդ, ով երանելի....
Խնդրեմ ի յԱստուծոյ, զի կեանքդ աւելի,
Ներքին և արտաքին չարն ի քէն փախչի.
Ծաղկանցն ամենալինի գլուխն դու ես...
Գունովդ փայելուչ, հոտովդ անուշ ես..
Յամէն առաւօտու քան զտրե փայլես.
Երանի՛ այն պահուն, որ տեսանեմ զքեզ.
Զի դու ես բնութեամբ անարատ և հեզ.
Խոնարհաբար հեռուստ երկրսլագեմ քեզ,
Եւ զդարձն քո խնդրեմ, քաղցրացի՛ր տռ մեզ...
Զի առանց քո տեսուդ ես եմ երերուն,
Գիշերն քուն չի գալը, այլ կենամ արթուն.
Նեղեալ և փղձկիմ թերը լինի գարուն,
Հալեր եմ և մաշեր ի քո կարօտուն»

Վարդն հրաման է տալիս ծաղիկներին՝ գնալ զարդարել «զլերունք, զդաշտ և զպաղչայ» որպէս զի սոխակին միիթարեն և յայտնեն, որ

«Ինձ գալու ատեն դեռ անպատեհ է.
Պուլպուլն սակաւիկ մի թող համբերէ.
Թէ կատարեալ իւր սէրն ի հետ վարդին է,
Ասացէք, որ ի դրախտն զնա որոնէ»
Երջանիկ սիրոյ ալս փոքրիկ վէպը կնքում է

Աղթամարցին, նկարագրելով գարնան գալուստն և ծաղիկների բացուիլը, որոնց մէջ սոխակն իւր վարդին էր որոնում.

«Յետոյ տեսաւ զկոնաչ տերեւն վարդին,
Ա՛յլ պատուական պայծառ որպէս զառաջին.
Վարդն էր կարմիր զգեցեալ որպէս ծիրանին,
Ծաղկունքն հաւասար երկրպագեցին:
Պուլպուլն զայն տեսաւ, ասաց զոհութիւն,
Յամենայն բերանոյ օրհնաբանութիւն,
Թագաւորին երկնից փառաբանութիւն,
Տեսալ աչօք իմովք զվարդն ի թփին:»

Սոխակի և վարդի աշխոյժ երգիչն ուրախութեան և վշտի վախճանն այս անցաւոր կեանքի մէջ չի տեսնում, թէև պէտք էր սպասել, որ իւր երգից յուսոյ և քաջալերութեան հրահանգ տար մեզ. նա ինքն իրեն այսպէս է յանդիմանում.

«Յիմար Աղթամարցի զխելքդ ժողովէ,
Զի սէր այս աշխարհիս հաւասար փուշ է....
Սակաւ խնդալ կուտայ, լետ դառն և գուժ է,
Ի՞նչ շահ է քո խնդալդ, երբ վերջն սուգ է..»

Այս վերջին սկոյ արտայայտութիւնն է, որ տալիս է մեզ Աղթամարցին իւր մի այլ երգով. հանրածանօթ է այդ տաղը. նորա բովանդակութիւնը շատ գեղեցիկ որոշում է մեր սեփական գըրչեալ տաղարանի վերնագիրը (1695), որ է այս. «Ճաղ եպիսկոպոսի միոյ, որ նոր այգի տնկեր է,

և դեռ ալգին պտուղ տվեր չէ, նա մահու օրն հասեր է, և ի ժամ հոգէվարութեան զայս աղերս ասեր է. տաղն սկսւում է այսպէս.

«Յամէն առաւոտ ե լոյս

Պիւլպիւլն է նստեր լայգւոյս,

Քաղցրիկ ձախէր վլալ վարդոյս.

Կ'ասեն թ'արեկ, Ել լայգւոյս.»

Աղթամարցին այս տաղի մէջ ուզեցել է պատկերացնել այն թէ ի՞նչպէս իւրաքանչիւր մարդու միտքն աւելի երկար է քան նորա կեանքը, թէ ի՞նչպէս մարդիկ չեն կարողանում իրենց նպատակների հեռաւորութիւնը չափել և զրկում են իրենց արդար քրտնքի պտուղը վայելելու բարեբաղտութիւնից այս աշխարհի վերայ. ահա ալգեգործը տեսնում է իւր ալգու մէջ սոխակին, որի քաղցր դայլալիկը փայփայում է նորա լսելիքը. տեսնում է իւր նորատունկ ալգին գոյն զգոյն ծաղիկներով զարդարած. նա այդ երջանիկ վայրը պատսպարելու համար գետերից քարեր է բերել, սարերից փռշ, և իւր ալգին ցանկապատել է, մէջը նոր տներ է շինել, աւազան և առուակներ է լարդարել, երկնահամ ջուր է հանել նոցա մէջ, և շրջապատել է ծաղիկներով, պէսպէս տնկիք է տնկել, խաղողի թփերով ծածկել է իւր ալգին, հնձան է շինել և կարասներ է դրել. նա իւր այդ բոլոր աշխատութիւններն լանձն է առել մի վայելչութիւն տեսնելու համար. բայց մահը գալիս և նորան արգելում

զրկում է այդ վերջին բաւականութիւնից. նա լուսահատ բողոքում է իւր անագորոյն ոսոխին, բայց ի զուր.

«Դեռ չեմ տեսեր կեանք և լոյս.
Կ'ասեն թ'արեկ ել լայգւոյս.

Դեռ չեմ կերեր այս պտղոյս.
Կ'ասեն թ'արեկ ել լայգւոյս.

Դեռ հոտ չեմ առեր վարդոյս.
Կ'ասեն թ'արեկ ել լայգւոյս.

Դեռ չեմ խմեր լայս գինւոյս,
Կ'ասեն թ'արեկ ել լայգւոյս...

Քաղեմ փունջ մի վարդ այգւոյս,
Դնեմ մէջ կարսի գինւոյս,
Ուրախանամ այս հոտոյս.

Կ'ասեն թ'արեկ ել լայգւոյս.»

Բնութեան անդառնալի օրէնքը տակաւին ոչ
մի մահկանացու կարող չէ եղել փոխել, որքան և
զերմ փափագ ունենայ աշխարհիս բարիքը վայելելու և չխնայէ իւր արդար քրտինքը՝ պատրաստելու իրեն համար այդպիսի բարիք. մի բան մնում
է միսիթարութիւն և սփոփանք այդպիսի վաստակաւորի սրտի համար, այդ այն գիտակցութիւնն է,

թէ իւր մշակածն և պատրաստածն ուրիշ մէկը կառող է պահպանել և վայելել, և այսպիսսվ աւանդել լաջորդող սերունդին իրըև ժառանգութիւն. Աղթամարցին իւր այս տաղի մէջ անշուշտ իսկական մահ և լուսահատութիւն է համարում այդ իսկ գիտակցութեան պակասութիւնը.

«Ծաղկունքն վերացան յայգւոյս.

Վարդն թափաւ իմ այգւոյս.

Ցանկն քակեցաւ յայգւոյս.

Ահա՝ որ ելայ յայգւոյս»

Այս հակիրճ նկարագիրն ամբողջացնելու համար պէտք է լիշուի և այն, որ Աղթամարցին Գրիգորիս մասն ունի և Աղէքսանդրի առասպելական պատմութեան հայերէն օրինակների խմբագրութեան մէջ, թէ որ չափով և որպիսի տարբերութեամբ իւր նախորդներից և լետնորդներից, այդ ճշգելու միջոցները պակասում են տակաւին (տես յաւելուած): Յատկապէս հետաքրքիր է այդ պատմութեան մէջ հիւսուած ոտանաւորների (կաֆաների) բարբառն և տաղաչափական ձեր, որոնց մէջ աւելի են երեսում Աղթամարցու առանձնութիւնները, թէպէտե մեր երգչի տաղերը մեծ մասով լորինուած են ԺԶ. դարու ռամկօրէնով, սակայն եթէ չհաշուենք նոցանից երկուսը ¹⁾), որ գրաբառ

¹⁾) Տես՝ «Աստուածանկար» և «Ահա ոյգիք մեր

են, մնացեալների մէջ բարբառի միակերպութիւն չկայ. այստեղ մենք տեսնում ենք տաղերի և ոտանաւորների երկու խումբ. մէկի մէջ Աղթամարցին հայերէնի հետ շատ է խառնում պարսկերէն և թուրքերէն բառեր, ոճեր-և ամբողջ տողեր ու տներ²⁾, իսկ միւսի մէջ այդ երեսովին չկայ: Մեր կարծիքով այդ երկրորդ խմբի տաղերի և ոտանաւորների մէջ առաւելապէս պէտք է որոնել Աղթամարցուն յատուկ հայերէնի իսկական պատկերը, նորան վերագրած կաֆաներն էլ այդ խմբի մէջ հաշուելով: Տաղերի բարբառից երեսում է, որ Աղթամարցին ընդունակ է գրաբառ երգելու, քաջ ծանօթ է հայ ժողովրդական բարբառին, գիտէ պարսիկ և թուրք լեզուներով բանաստեղծական ոճեր, դարձուածներ և ամբողջ հատուածներ, և մեր արդի ռամկօրէնի ուսումնասիրութեան համար շատ հա-

ծաղկեցան»: Թէեւ Հայերգի մէջ (92) մի երգ եւս «Գովեմ զքեզ մարմնով հրեշտակ» վերագրուած է Աղթամարցուն, սակայն այդ գրաբառ երգի ոճի և մտքերին նայելով կասկածում ենք, որ այս Գրիգորիս Աղթամարցին լինի նորա հեղինակը. թերեւս միւս Աղթամարցին, իմաստասէր կոչեցեալ, յօրինած լինի այդ երգը:

¹⁾ Տես Տաղ գարնան, Տաղ վասն վարդի և պիւլ պիւլի, Տաղ անոյշ և գեղեցիկ, Տաղ սիրոյ, Դուդրախտ Եդեմայ և աշն:

ըուստ նիւթ է տալիս ¹⁾:

1) Վիէննայի Մխիթ. մատենադարանի «Ցուցակ Զեռագրաց» գործի մէջ Հ. Յակ. վ. Տաշեան տեղեկութիւն է տալիս Գրիգորիս Աղթամարցու մի քանի այլ տաղերի մասին, որոնք մեզ ծանօթ չեն: Այսպէս յիշուած են՝ 1) Գանձ Տապանակի «Տապանակ կազմեալ անփուտ» թ. 69. «սկզբնատառք Տէր Գրիգորիսէ.» 2) «Գանձ Տ. Զաքարիայ կաթուղիկոսի Աղթամարցոյ ասացեալ ի Գրիգոր վարդապետէ. Գթացեալ քոյին արքայդ երկնային» տունք «Գրիգոր» թ. 139. 3) «Գեղեցիկ պատկեր» կարմիր ես հագեր, բերեմ նուռ ու խնձոր, դու կե՛ր» թ. 343. 4) Անեղին տաճար» 5) «Գու ես յադենայ դրախտէն զոր տնկեալ աջն անեղական» (տե՛ս և Ուսումն. Ստ. Կալիսթ. 136 և 137, 6) Այսէն մինչև ի քէն քենէ գանկտիմ ես, բի Ներսէս յում ասեմ, իբր դու լսող չես» և 7) Անմահ բնութիւն առեւ և զմահուան օրն մոռացայ» թ. 344. 8) Տաճկերէն և լ' երգ «Զաւղ սաւտուկում երուսաղէմ» վերջը «Նուաստ Գրիգոր ոտից ձեր հող» (այս երգը մեր սեփ. գրչ. տաղարանի մէջ էլ կայ, բայց չենք կարծում, որ երգիչն Աղթամարցին լինի) թ. 390. 9) նոյնպէս տաճկերէն մի երգ Գրիգորի «Գերեզմանտան քի նուր չօխար», թ. 405. 10) «Աշերգ է թուխ, ընթերգ կամար» և 11) «Գոյիս (թերեւս Գո յիս) գիտութիւն, բայց խամրացեալ է, գոյ երկիւղ բարեաց, այլ շիջնի միշտ» (տաճկերէն խառն)։ Եթէ այս տասն և մէկ տաղերն էլ ճշդուէին Աղթամարցու անունով և լոյս տեսնէին Վիէննայի Մխիթարեան տպարանից, այն ժամանակ բաւական շատ նիւթ կլինէր ձեռքի տակ մեր երգչի գրական արժանիքների վերայ ընդարձակ խօսելու:

ԳՐԻԳՈՐԻԱՆ ԸՆԹԱՄԱՐՑՈՒ ՏԵՂԵՐԸ

1. Վասն վարդի և պիւլպիւլի «Յետ գնալոյ վարդին».
 2. Տաղ գարնան «Գարունն երեկ».
 3. Տաղ անոյշ և յոյժ գեղեցիկ «Ծաղկունք ասեն».
 4. Տաղ սիրոյ «Մաքուր պատկերով».
 5. «Դու դրախտ եղեմայ».
 6. Տաղ վասն սիրոյ «Դու ես արեգակ».
 7. Տաղ վասն սիրոյ և ուրախութեան «Աստուածանկար»
 8. Վասն ուրախութեան «Արեգակնախայլ գեղով».
 9. «Ահա՝ այդիք մեր ծաղկեցան».
 10. «Մառմինս զհոգիս զրկէ».
 11. «Եղուկ հազա՞ր մի վա՞յ».
 12. Տաղ Աստուածատուր Խթայեցւոյ «Վաճառական մի».
 13. «Յամէն առաւօտ և լոյս»
 14. «Յորժամ զիս ինձէն գտայ».
-

1. ՎԱՍՆ ՎԵՐԴԻ ԵՒ ՊԻՒԼՊԻՒԼԻ

Յետ գնալոյ վարդին եկ պիւլպիւլ¹⁾ լալգին
Ետես թաքուր զվրանն, քաղեցաւ հոգին.
Շրջէր²⁾ և հարցանէր ըզ իւր սիրելին.
Կանչէր Զար և Ֆիղան³⁾ իմէջ գիշերին:
Ալգի ընդ քեզ ասեմ, տուր ինձ պատասխան,
Ընդէր ոչ պահեցեր զվարդն իմ պատուական,
Որ էր ամէն ծաղկանց սալվար⁴⁾ ու սուլթան,
Գունովն գեղեցիկ, հոտն անմահութեան:
Քակուի քո ամուր պատն⁵⁾, դառնաս աւերակ,
Զորնայ ճիւղն և տերևն ծառերուդ շիտակ,
Ամէն ոտն խաղայ ի քեզ համարձակ,
Վերնալ բոլոն և բանջարն և ամէն կանաչ տակ⁶⁾:
Ակունք լորդախաղաց, մի գնալք լառաջ,
Ծառեր, թօթափեցէք զտերև ձեր կանաչ.
Խօսիմ պարզ և իստակ⁷⁾ և ասեմ անամաչ,
Զի տարան 'ի լինէն զսիրելին իմ քաջ⁸⁾:
Զիմ վարդն լինէն⁹⁾ տարան և արին զիս շիւար,
Առին զլոլս աչացս¹⁰⁾, տիրեց ինձ խաւար,
Զտիւ և զգիշեր ողբամ անդադար,
Դարձեր եմ մաղասկաթ և չունիմ զրար¹¹⁾:
Լինի թէ ալգէզործն արար զալս ընդ իս.

Տարաւ զվարդն լինէն, ցաւեցոյց զհոգիս.
Ալլ զնա ոչ տեսանեմ, զինչ լինիմ գերիս,
Փոխան ուրախութեան ողբ ասեմ վարդիս:
Վախեմ, հողմն սաստիկ ելաւ ահագին,
Վասն ալն թառամեցաւ¹²⁾ տերևն վարդին.
Եւ կամ խորշակահար տապն արևին
Եհար թարշամեցոյց զգեղն¹³⁾ վարդին¹⁴⁾:
Կարծեմ, եթէ ծաղկունքն արին հետ ինձ քէն¹⁵⁾:
Տարեալ հեռացուցին զվարդն լինէն,
Եւ կամ կարկուտ եկաւ սաստիկ ի յամպէն¹⁶⁾՝
Եհար զնա անողորմ, կտրեաց ՚ի թփէն:
Ծաղկունքն ամէն ասեն նորա միաբան,
Եթէ բնաւ չունիմք¹⁷⁾ ի վարդէն կուման.
Մեզնէ քեզ թէսէլի¹⁸⁾, այ հազարդաստան¹⁹⁾,
Ազ մա նագահ ըռաւթ սըռի ու փինհան²⁰⁾:
Գնաց պիւլպիւլն առ թռչունքն և Եհարց
զվարդն ի նոցանէ:

Պլպուլն վերացաւ ի յօդքն²¹⁾ թեռվ,
Ասաց թէ հարցանեմ թռչնոցն սիրով,
Եթէ գիտեն նոքա, յայտնեն²²⁾ ինձ փութով,
Թէ չէ, հանեմ յաշացս արտասուք քան զծով:
Թռչունք այսօր գիտէք, թէ ինչ գործեցաւ.
Զի վարդն վալելուչ յայգւոյն վերացաւ.
Զգիտէք, թէ ուր գնաց կամ ով գողացաւ²³⁾,
Միթէ տեսեր էք դուք, լսե՞ր էք զհամբաւն:
Ասեն թէ Արարիչ Տէրն գիտակ է.

Ամէն ծածուկ սրտի նա տեսանող է.

Գնա, շընէլը ²⁴⁾), այլ տեղ զնա որոնէ,

Զքո վարդն չենք տեսեր, Աստուած վկայ է:

Պլպուլն դառնացաւ, ասաց զի՞նչ լինիմ.

Դիշերն մինչի լուս ես մտօք տանջիմ,

Վախեմ թ' առանց վարդին լանկարծ մեռանիմ,

Կարօտով բաժանեալ ի հող իջանիմ:

Թէ զարարածս ամէն վարդին փոխան տան ²⁵⁾),

Նա ինձ անարգ թուի և ոչ ինչ անպիտան,

Կամ դասք երգեցողաց երաժշտական

Քաղցրիկ եղանակեն, ինձ գուժ է և գան:

Ուր տարան զքեզ լինէն կամ ²⁶⁾) ուր թագուցին.

Զիարդ մոռանամ ես զսէրն քոյին.

Խոցեցաւ սիրտս ու լերդս կսկծագին.

Ծաղկունքն հաւասար այսօր թառամին:

Իմ կեանքս երազ ²⁷⁾ և ես լերերմանի.

Եւ լոյս արեգական ինձ խաւար թուի.

Ցաւօք ²⁸⁾ և դառնութեամբ աւուրքս անցուցին ²⁹⁾,

Որ և ի թիւ կենաց իմ ոչ ³⁰⁾ համարի ³¹⁾:

Վարդէն բաժանեցալ ողորմ ու լալի.

Եւ բան մարգարէին առ իս կատարի,

Քան զհաւալասան իմ լանապատի,

Եղէ ես որպէս բու ի լաւերակի ³²⁾:

Գնաց այգէգործն, խօսեցաւ ընդ պլպուլն եասաց.

Եկեալ այգեգործին, մխիթարեաց զնա.

Ասաց. Մի լար, պլպուլ, քո վարդն կուգալ,
Եկեալ է մանուշակն վարդին փիատալ³³),
Թուրա խապար ամատ, սէլամ ու տուալ³⁴):
Իսկոյն ուրախացեալ, և օրհնեաց զնա³⁵).

Խաղաղութեամբ կենաս յաշխարհիս վերալ,
Ալգին քո փթթի³⁶), ծաղկունքն ի նմա.

Պարիսպն նորոգի՛, և ի մէջն բրգալ³⁷),

Ամէն արմատք և ճիւղքն դալարանան,
Առնուն շաղն ի յամպէն³⁸) և պայծառանան,
Շարժին քաղցըիկ հողմով, վայելուչ ճօճան³⁹),
Եւ զհոտն տարածեն ի քիմս մարդկան:

Ապա գրեաց թուղթ պլպուլն առ վարդն, և վարդն
ժողովեաց զծաղկունքն, և ետ ընթեռնուլ զնա առա-
ջի ամենեցուն, որ ունէր օրինակ զայս.

Առեալ տարան զնամակն ի դուռն վարդին.

Զհազրէ վարդն տիւան կարդացող,
Կանգնաւ վերալ ոտիցն և թուղթն ի յափին⁴⁰),
Ընթերցաւ բարձրաձալն ի լուր ամենին:
Ես քեզ ողջոյն գրեմ, սրտով⁴¹) սիրելի.

Եւ հարցանեմ զանձնէդ⁴²), ով երանելի.

Յուսամ ապէնիազ Աստուածն ամենի,

Որ անարատ մարմնով ես դու⁴³) կենդանի,

Զօրն⁴⁴) բազկատարած կամ ի յաղօթի,

Խնդրեմ ի յԱստուծոյ՝ քո կեանքդ լերկարի⁴⁵):

Ծաղկանցն հաւասար գլուխն դու ես,

Որպէս զարքալն և տէր ամենուն տիրես⁴⁶),

Գունովդ վայելուչ, հոտովդ անուշ ես,
Ամէն առաւօտու քան զարև փալես:
Երանի այն պահուն, որ տեսանեմ զքեզ,
Զի դսւ ես բնութեամբ անարատ և հեզ,
Խոնարհաբար հեռուստ երկրպագեմ քեզ,
Զդարձն քո խնդրեմք, քաղցրացի՛ր ընդ մեզ:
Թէ զիմ նուաստութիւնս⁴⁷⁾ հարցանես դուն,
Չունիմ խելք ու փասար⁴⁸⁾ և ոչ իմաստութիւն,
Չառնում դուր և դադար, և ոչ շինեմ ըուն⁴⁹⁾),
Նա դարամ թաղաթ, նա էք մսխալ խոյն⁵⁰⁾),
Զի առանց քո տեսուդ եմ ես երերուն,
Գիշերն քուն չգալ, այլ կենամ արթուն,
Նեղեալ և փղձկիմ, երբ լինի դարուն,
Հալեր եմ և մաշեր ի քո կարօտուն,
Սաստկասառոյց ձմեռն էանց, անցուցի⁵¹⁾),
Շատ ցաւ և շատ ցնոր դէմ քեզ քաշեցի,
Զիս նախատէին և ասէին գերի',
Եթէ վարդն բնաւ հետ քեզ սէր չունի:

Կսեց վարդն զպատգամ պլպուլին, դարձոյց առ նա
զպատասխանին.

Վարդն պատասխանի նորա թղթոյն տալ,
Ասաց. բազում ծաղկունք առաքեմ առ նա.
Ծածկեն զլերունքդ ու զդաշտ, ու զամէն
սարալ⁵²⁾),
Ի հոն ուրախութեամբ⁵³⁾ պլպուլն կենալ,
Ինձ գնալու ատեն այժմ⁵⁴⁾ անպատեհ է.
Պիւլպիւլն սակաւիկ մի թո՛լ համբերէ.

Թէ կատարեալ իւր սէրն 'ի հետ ինձ⁵⁵⁾ է,

Ասցէք, թէ ի դրախտն զնա որոնէ:

Գնացին և տարան զնամակն առ պլպուլն. և նա բացեալ զբերանն ուրախութեամբ և ասէ.

Ուրախացաւ պլպուլն ընդ ասել⁵⁶⁾ բանին.

Ասաց թէ աւետիք ինձ այսօր բերին.

Զի վարդն վայելուչ գալ ալլուի լալգին⁵⁷⁾,

Զէ արարած ամէն կարմիր վարդին գին:

Երբոր⁵⁸⁾ արևն ի խոյն եկեալ ժամանեաց.

Ամպն ի վերուստ ցօղով⁵⁹⁾ լանկարծ որոտաց.

Բուսան ծաղկունք լերկրի հազարք հազարաց⁶⁰⁾.

Վարդն չէր 'ի միջի, պլպուլն որոնեաց⁶¹⁾:

Յետոյ տեսաւ կանաչ զտերևն վարդին,

Ալ պատուական պայծառ որպէս զառաջին,

Վարդն էր վարագուրով ի մէջ գահոյին⁶²⁾,

Ծաղկունքն հաւասար երկրպագեցին:

Պլպուլն զայն տեսաւ, ասաց գոհութիւն,

Յամենալն բերանոյ օրհնաբանութիւն,

Թագաւորին երկնից փառաբանութիւն,

Տեսալ աչօք զվարդն ի մէջ թիերուն:⁶³⁾

Յիմար Աղթամարցի, զքեզ⁶⁴⁾ ժողովէ.

Զի սէր այս աշխարհիս հաւասար փուշ է.

Սակաւ խնդալ կուտալ, լետ դառն և գուժ է.

Ի՞նչ շահ է քո խնդալդ, երբ վերջն սուգ է:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Մեր սեփական գրչեայ տաղարանից, որ գրուած է 1695 թ., արտագրուեցաւ այս

տաղը. բաղդատուել է մի քանի գրչեայ օրինակների հետ, որոնցից հնագոյնը 1617 թ. էր գրուած. երկիցս լոյս է տեսել սոյն երգը. նախ՝ Կ. Պոլսի Բանասէրի մէջ 1851 թուին և երկրորդ՝ Բաղմավէպի մէջ 1861-ին. առաջինը թերի է. այնտեղ տաղը վերջանում է այն պարբերութեամբ, ուր ասւում է «ապա գրեաց թուղթ պլպուլն.» Բաղմավէպի մէջ «Խընդրեմ ի յԱստուծոյ, զի կեանքդ աւելի» տունն այսպէս է.

«Խնդրեմ ի յԱստուծոյ քո կեանքդ երկարի Որպէս Աղէկսանդրու մեծ թագաւորի.

Ներքին և արտաքին չարն ի քէն փաղչի,
Քեզ Աջն անեղական հովանի լինի»:

Գրչեայ և տպագիր օրինակների համեմատութիւնից երևած տարբերութիւնների մէջ նշանաւորներն հետևեալներն են. ¹⁾ պուլպուլ. պլպուլ. ²⁾ Խնդրէր. ³⁾ զարուֆիղան. զաիրիֆիղան. զառիֆիրզան. զարիֆֆիղան. ⁴⁾ սէլվէր. սէլվէրու. ⁵⁾ պարիսպդ. ⁶⁾ կանչի. ⁷⁾ յստակ. ⁸⁾ զի տարան զվարդն իսնէ սիրելին. ո՞ւր է որ աստ թողի զսիրելին. ⁹⁾ ի քէն. «զիմ վարդն յիսնէ.» ¹⁰⁾ աչերու. ¹¹⁾ իքրար. զարար. ¹²⁾ թօթափիեցաւ. ¹³⁾ տերևն. ¹⁴⁾ բոյին. ¹⁵⁾ հետ ի. ¹⁶⁾ ի սաստիկ ամպէն ¹⁷⁾ չունինք. ¹⁸⁾ թասալի. ¹⁹⁾ է՛ հաղարտաստան. — տասան. — հաղի ի դատաստան. ²⁰⁾ աղմա նագահ ըռաւտ սըղի ու փինհան. — էղմէ նէքէհ ոօդ ու սէլվի չինար. — ազ ման ագահ ըռութ սահի ու փանհան. ²¹⁾ ի յօդն. ²²⁾ ասեն. ²³⁾ կամ գողն գողացեալ տարեալ թագուցած. ²⁴⁾ զրջէ'. ²⁵⁾ այս և հետևեալ Յ տողն չիք. ²⁶⁾ ո՞ւր տարան, վարդ, զբեզ կամ, ²⁷⁾ իմ կեանքս է գէմ երազ. ²⁸⁾ դըժար. ²⁹⁾ օրերս անցանի. ³⁰⁾ չիք. ³¹⁾ անկանի. ³²⁾ այս տողն չիք. ³³⁾ փիատայ. վարդն փշեալ

է. ³⁴⁾ Թուրա հապար ամատ սալամ ու տովսյ. — Թուրապ խամզեր էմանէթ սէլամ կուղողայ. ³⁵⁾ ի նոյն ուրախացաւ և օրհնեց զնա. ³⁶⁾ զարդարի. ³⁷⁾ և ի մէջն սուր գայ. — և մէջն արքայ. ³⁸⁾ ի յամպոյն ³⁹⁾ զուարճանան. ⁴⁰⁾ ի ձեռին. ⁴¹⁾ սրտէ. ⁴²⁾ զձայնէդ. ⁴³⁾ մնաս. ⁴⁴⁾ զոր և ⁴⁵⁾ զի կեանքդ աւելի. ⁴⁶⁾ ամենից տէր ես. ⁴⁷⁾ զգաստութիւն. ⁴⁸⁾ պասար. ⁴⁹⁾ և ոչ եմ ես ի տուն. ⁵⁰⁾ խոյն հուն. ⁵¹⁾ այս և հետևեալ Յ տողն չիք. ⁵²⁾ որ զարդարեն զլերունք, զդաշտ և ըզպաղջայ. ⁵³⁾ Աահրայ ի հուն ուրախ. ⁵⁴⁾ դեռ. ⁵⁵⁾ վարդին. ⁵⁶⁾ լսել. ⁵⁷⁾ զիմ գեղեցիկ զվարդն ի յիս հասուցին. ⁵⁸⁾ յորժամ. ⁵⁹⁾ ի վայր. ⁶⁰⁾ և ցեղք ի ցեղաց. ⁶¹⁾ պլպուն ի մէջ նոցա զվարդն որոնեաց. ⁶²⁾ վարդն էր կարմիր զգեցեալ որպէս ծիրանին. ⁶³⁾ տեսայ աչօք իմովք զվարդն ի թփին. ⁶⁴⁾ զիսելքդ:

Այս տաղի մէջ բաւական օտար բառեր կան. մեծ մասը պարզ չէ այն պատճառով, որ գրիչների աղջատումն է նկատւում. մի քանիսը կարելի եղաւ վերականգնել և բացատրել. զոր օրինակ. զար եւ ֆիղան, նոյն և զարիֆիղան — սուգ, հեծեծանք. սալվար թերես սալար — գլուխ, զօրտգլուխ. իքրար, ղըար — կարողութիւն, ոյժ. կուման — յոյս, լուր. թասալի — սփոփանք, միսիթարութիւն. հազարդաստան — սոխակ (հազարապատում). ազ մա նազահ ըոսութ — մեղանից յանկարծ գնաց (պարսկ.). լիիատայ — հետեւակ, յառաջընթաց. թուրա խալար ամատ, սէլամ ու տուայ — քեզ լուր եկաւ, սղոյն և մաղթանք. (պարսկ. թուրք) ըրզայ, սլոքայ պարքահ — հովանոց, վրան, արքունիք (խեկապէս բարգահ). նա' ղարամ թաղաթ, նա էք մսխալ խուն — չունիմ կարողութիւն, ոչ մի մսխալ արիւն. սարայ. ապարանք.

2. ՏԱԴ ԳԱՐԿԱՆ

Գարունն երեկ պուլպուլն¹⁾ ալգին,
Ծաղկունք ամէն շատլըխ արին,
Եւ մուշտուլուխ տարան վարդին,
Թէ՛ելեր կուգայ քո սիրելին:
Բախացեալ սլուլպուլ հաւին
Ընդ կանաչել վարդին թփին,
Գնաց սլուլպուլն իբեր զղումրին,
Թէ՛ եկ և տես ըզ ելք²⁾ վարդին:
Ի մէջ պաղչին վրան զարկին,
Ի ինքն էր քիւն մէջ կոկոնին.
Կանչեց պուլպուլն զղազալնին,
Ուրախացաւ ի տես վարդին:
Գիշեր ցորեկ կամ էրերուն³⁾,
Եւ ես կ'ուրիմ ի դէմ վարդուն,
Թէ՛ երբ ելնէ ինքն ի քնուն,
Քանի՛ անեմ զար իւր⁴⁾ սիրուն:
Ով սիրելիք իմ հաւասար,
Թէ՛ գիտէք դեղ, արէք ինձ ճար,
Գնամ ի վարդն զենեհար⁵⁾,
Եւ ծառայեմ սրտովս յօժար:
Բամք թոշնոց, զձեզ մոռացալ
Յորժամ զքափուր վարդն տեսալ,
Ընդ ահեղ գոյնն հիացալ.
Ի բուրմանէ հոտոյն արբար:

Ի քէն հայցեմ, վարդ պատուական,
Մի համարիր զիս անարժան,
Կամ սպասաւոր ի քոլդ դրան,
Մի արձակեր զգերիս ունախ։
Սէր քո ահեղ, անտանելի։

Տկար թռչունս զիարդ լինի։

Սիրտս վառեալ⁶⁾ հրով ալրի,
Թէ ինձ չառնէ պատասխանի։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Այս տաղն օրինակուեցաւ 1617

Թուին գրուած մի տաղարանից. Համեմատել ենք Ժէ.
Դարում գրուած մի այլ օրինակի հետ, որ ունէր հե-
տևեալ տարբերութիւնները. ¹⁾ կանչելով, ²⁾ զգոյն.
³⁾ յիրիկունն. ⁴⁾ կանչեմ զարու. ⁵⁾ զինահար. ⁶⁾ վառել։

Սկզբնատառերն յօդում են երգչի անուն «Գրի-
գորիս»։ Տաղիս մէջ օտարազգի բառերն են. շատլըն
—ուրախութիւն. մուշառուլուիւ—աւետիք. պաղչայ—
պարտէզ. ղումըի—տաժրակ, (կ. արտոյտ). ղազալ,
յոգն. ղազալնի—տաղ (բնարակ. երգի մեծ տեսակն
է պարսից մէջ). զար անել—սուգ անել, ողբալ. զե-
նեհար, զինահար—պաշտպան և մատաղ, զոհ. քա-
ֆուր—ճերմակ։

3. ՏԱՂ ԱՆՈՅԾ ԵՒ ՑՈՅԺ ԳԵՎԵՑԻԿ

Ծաղկունք ասեն, հերիք արա՛,
Քանի՛ կանչես վարդին վերալ.
Կեահ ու պէկեահ ձայնդ կուգալ.
Ի մեր պաղչէն ել ու¹⁾ գնալ:
Քանի՛ առնէք դուք ինձ ատապ.
Սիրտս ի սիրուդ եղեր քէպապ.
Ես կումաշիմ վարդին սէպապ.
Իմ հալս առանց իւրն է խարապ:
Գամ իջանեմ վարդենւոյն տակ.
Զկանանչ տերևն առնեմ ինձ յարկ.
Ի սրտիս մէջն կալ²⁾ կրակ,
Թռչեմ և գամ արագ արագ:
Ի քեզ նալիմ աչօք անթարթ.
Նա փարատի զինչ կալ հէսրաթ.
Գեղեցկութիւն դրախտի և զարդ,
Կարօտ են քեզ ամենայն մարդ:
Վարդն կ'ասէ. պլպուլ, երգէ,
Քաղցը ձայնիւ եղանակէ,
Ով որ զքո ձայնդ լսէ,
Նա հիանալ զմեզ երանէ:
Ով նենգութեամբ առնէ քեզ նազ,
Թո՛ղ իւր աւուրքն դառնալ նուազ.
Էմրի թուրա պաշաթ դրազ,
Պլպուլ, պլքօվ, դու պաավազ³⁾),

— Գուրղան կը Փտանա՛ պլպուլէ⁴⁾ ,
— Քանի՛ կանչես, մէկ պահ լռէ .
Ասաց, թէ սէրն կու նեղէ,
Որ վրալ⁵⁾ վարդին աշըգ եղէ .
Սիրտս չկայ հետ իւրն հերթ,
Քանի՛ խոցէք, ասէք թէ երթ .
Հողմն շարժէ զվարդին թերթ,
Նա ի դողման դառնալ իմ լերթ,
Այլ չի մնաց բնաւ լիս ուժ .
Երբ հեռանամ, չունիմ ես ժուժ .
Ինձ օր մահու լինի և գուժ,
Հոտն վարդին է սրտիս բուժ:
Զօրն կենամ էրէրմանի .
Քունս է հատեր ի գիշերի .
Աղաղակեմ արտասուալի,
Յալգւոյս չերթամ ես այլ տեղի:
Ըստանկ վարդին որպէս զլալ
Տեսաւ պլպուլն, եղաւ պէհալ .
Անմահութեան հոտն բուրեալ,
Նա ի սիրոյն եղև արբեալ:
Վարդն տեսաւ զպուլպուլն ուրախ,
Որ ձայն կ'ածէր ինքն անահ⁶⁾ ,
Ծիծաղեցաւ ինքն մէկ պահ,
Պալծառացաւ տիպն քան⁷⁾ զջահ:
Վարդն կարմիր գունով վառած .
Նաշահ պիւլպիւլն ձայն էած .

Հոտոյն ⁸⁾ եղեւ խեւ ու արբած,
Վարդին տեսոյն էր կարօտած.

Պիւլպիւլն ասաց. ես եմ առակ.
Թռչունքն կ'առնեն զիս կատակ.
Վարդն չի նայեր ինքն երակ,
Նա ի յաչացս ելաւ վտակ:
Զօրն ի ճղոյն լինիմ ի կախ ⁹⁾),
Եւ միշտ դիտեմ վարդին ռահ.
Զով որ տեսնում, նա ինձ է մահ,
Զվարդն քաղեն, տանին անահ:
Վարդն զգեցեալ ¹⁰⁾ գունով ¹¹⁾ հանդերձ,
Ուրախանամ, որ լինիմ մերձ.
Կ'ասէ. սիրով դու առ իս դ'արձ.
Զահն և զերկիւդն ի յիսնէ բարձ:
Կ'ասէ. Մի առներ հետ ¹²⁾ ինձ խաղ.
Ես եմ կարմիր, աղուոր, ուրաղ ¹³⁾).
Յօղն իջանէ ամպէն պաղ պաղ
Վերայ վրանիս իմոյ խաղաղ:
Վարդն կ'ասէ. Զայն քաղցը ա՛ծ ¹⁴⁾),
Իրիկուանէ ես եմ հարբած,
Ծաղկանց ամենուն եմ սէր թաճ,
Պայծառ գունով լուսաճաճանչ:
Ֆիրեաթ կ'առնէ ինքն ամէն.
Զկանաչ փարտէս ¹⁵⁾ ետ կուբանամ.
Զքեզ որ տեսնում, ուրախանամ.
Ալլ ի քեզնէ ոչ հեռանամ:
Վարդն զպիւլպիւլն կուզովէ.

Չայնդ կուգալ իրիկուընէ.
Ծաղկունքն ամէն են քեզ ծառալ,
Դու թագաւոր և տէր նոցա:
Պիւլպիւլն զարթնի մէջ ¹⁶⁾ գիշերին,
Վարդն փթթի ¹⁷⁾ առաւօտին.
Յօղն իջանէ ի վերալ թփին,
Պայծառանալ գեղն ¹⁸⁾ վարդին:
Նուրջ ու բոլոր իւրենն ¹⁹⁾ է փուշ.
Հոտն բուրէ վարդին անուշ.
Թմրաւ ²⁰⁾ պլպուլն, եղև պէլուշ.
Ասաց. Ի՞նչ ժամ եղէ քեզ տուշ ²¹⁾:
Եմուտ պիւլպիւլն ի վըրան վարդոյ,
Թէ ես եմ գանգատ ամէն ²²⁾ մարդոյ.
Բեր համբուրեմ զտիպն քոյ ²³⁾,
Որ դուրանալ ցաւս մարմնոյ ²⁴⁾:
Ես չունիմ սէր հետ քեզ վաղուց.
Զգալդ և զգնալդ քեզ ով ուսոյց.
Դու ես աղուոր և վայելուչ.
Է՞ր կուխոցես զիս առանց սուչ:
Զտիւ և զգիշեր ես եմ ի տապ.
Եղէ անշարժ որպէս ի կապ.
Լափած սրտիս ես դու շէրպէթ ²⁵⁾,
Որ սեացեր է քան զարապ:
Չայնէ պիւլպիւլն անամաչ.
Ասէ. Կենալ վարդն կանալ.
Ասէ. Ծաղկունքն ելնեն առաջ ²⁶⁾
Ալն զօրաւոր արքալին քաջ:

Դու պատուական աղուոր անթառ²⁷),
Լեզու չկայ, առնէ քեզ ճառ.
Պայծառ գունով ես միշտ ի վառ,
Քո թշնամւոյն սիրտն քան զսառ²⁸)
Ի հետ վարդին քանի՛ դատիս.
Սիրով նորու դու միշտ վառիս²⁹),
Երբ նա քաղցրիկ նալի ի լիս,
Զուարճանալ սիրտս և հոգիս:
Ես կուալրիմ միշտ կրակով,
Թէ չի տեսնում զվարդն ջրկով³⁰).
Է՞ր կումերժես զիս կրատով³¹),
Ես կուգովեմ զվարդն ձայնով:
Կ'ասէ. Զկայ ի քեզ արատ.
Ի յաշխարհէս կենաս անհատ.
Ի փորձանաց կենաս ի զատ,
Կանաչ վրան և կարմիր այտ:
Յամէն սապահ, որ լուսանալ³²).
Պլպուլն ի վարդն սէլամ տայ.
Ղումըին քաղցրիկ եղանակէր,
Զվարդն և զպլպուլն ուրախ առնէր:
Հետ պլպուլին արա զրոյց,
Երբոր գայցէ ինքն ի դրուց,
Ուրախութեամբ զքեզ քնոյց³³),
Զնա որոնէ³⁴) ի յալլ հաւուց:
Եղե պլպուլն թեաթափ,
Թէ երբ ածեմ զվարդն ի յափ,
Քանի՛ ֆիրղան կանչեմ անչափ,

Ի դէմ վարդին հարկանեմ ծափ:
Ի ձեր սրտին դուք սէլ չունիք,
Վասն այն ³⁵⁾ զիմ ձալնս չընդունիք.
Վարդն կ'ասէ. Մ'էներ հերիք ³⁶⁾),
Ես կուկանչեմ, ունիմ կարիք:

Գերի Գրիգոր անլիշելի,
Եւ անպիտան Աղթամարցի,
Սէր աշխարհիս սուր երկսալրի.
Հոգիս նովաւ վիրաւորի:
Աստուածատուր Մեծոփեցի
Յինէն խնդրեաց և ես գրեցի,
Դուք ասացէք սրտով ի լի
Ինձ և նորա Տէր ողորմի.

Թուական Հայոց ինն հարիւր,
Եօթանասուն և երկուք այլ իւր.
Հագարացիք օրինօք թիւր
Զազգս խանձեն որպէս զհուր:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ այս տաղն օրինակուեցաւ 1695
Թուին գրուած մեր սեփական տաղարանից, հրատա-
րակուել է Հայերգի մէջ ևս. մենք համեմատեցինք
1617 թուին գրուած տաղարանի և Հայերգի օրինակի
հետ: Առաջինի մէջ աւելի էր մի տուն, որ է հետեւեալը:

Վարդն ի պուլպուլն երբ խօսեցաւ,
Այլ տրտմութեան հոգ չի տարաւ.
Քան թէ խնդաց ուրախացաւ,
Զի իւր սրտին սէրն լցաւ:

Այս տաղի իւրաքանչիւր տան վերջին հնչիւնը գասաւորուած է Հայոց այբբենի կարգով, թէև շատ տեղ բռնազբօսիկ յանգերով։ 1617 թ. տաղարանի մեր նշանակած տունը գտնւում է յ և վի տների մէջ (*g, ւ, փ,*) ինչպէս երեսում է յանգերից։ Մի աւելորդ տուն էլ Հայերգի օրինակն ունի վերջին տանը կից, որ է այսպէս.

Տաղս է ասած Գրիգորիսին.

Գովեաց զբլբուլն ի յետ վարդին.

Լալով առ ոտս ձեր անկանիմ,

Ասէք զամէն և ողորմին։

Այսպիսով ամբողջը բաղկացած է 39 տնից, որից 37 մեր օրինակից է արտագրուած։ Յանգերի այբբենական գասաւորութեան մէջ պակաս է ո՞՛ հնչիւնի յանգը, որ իսկապէս անհնարին է Հայոց լեզուի մէջ, թէև Շնորհալու տաղաչափութիւնների մէջ (Վենետ. 1830) այբբենի կարգով յանգերի գասաւորութեան մէջ կան այսպիսի բռնազբօսիկ ոտքեր, որոնք բնական չեն և լեզուին հակառակ են.

«Ըստ մանկական տիոց նոցալ

Նոյն և խոստումն յարակալ» կամ թէ,

«Ընտրեալ գլուխ գոյր հայկազինը

Գրիգորիոս Պահլաւունինը» (տ. Եր 356 և 361)

Այս տաղն Աղթամարցին յօրինել է 1523 թուին։ այսպէս էր 1617 թ. ձեռագրում և այլ տեղերում։ իսկ 1695 թ. ձեռագրում այն տունը, որի մէջ երգի յօրինման տարին է յիշւում, այսպէս է.

«Թվին և իսկ հայոց հարիւր,

Եօթանասուն և երկու այլ իւր» ևալն.

Այլ օրինակների համեմատութիւնից երեցած տարբերութիւններն հետևեալներն են. ¹⁾ ելի՛ր. ²⁾ բոց. ³⁾ «Ամրի թուրայ բաշաթ դրազ, պուլպուլ բըքոյ, տըկ բայաւազ» «փաշաթ թրազ, բլբուլ բըքօթ ու բաաւազ» ⁴⁾ «ֆիրղան բըքթայ նայ պուլպուլէ» «ֆրղան գֆթանայ» ⁵⁾ հետ. ⁶⁾ անմահ. յանգը և հնչիւնի վերայ է, ուստի փոխանակ անահ, պահ, ջահ միւսների մէջ է անախ, պախ, ջախ, որ հակառակ չէ վանայ կամ Ադթամարու գաւառական բարբառին. ⁷⁾ տիպքն որպէս ջահ. ⁸⁾ խոտէն (իս—հ). ⁹⁾ ի կահ (հ—իս). ¹⁰⁾ հագեր. ¹¹⁾ կարմիր. ¹²⁾ խետ (իս—հ). ¹³⁾ կարմիր ուազորազ. ¹⁴⁾ բարած. մի օր այս տունն չի՛ք. ¹⁵⁾ փէրտաս, փէրտէն. ¹⁶⁾ կէս. ¹⁷⁾ բացուի. փթթէ. ¹⁸⁾ գոյնն. ¹⁹⁾ շուրջ բոլորին իւրեանն. ²⁰⁾ տեսաւ. ²¹⁾ թուշ. ²²⁾ անգէտ. ²³⁾ զտիպդ սիրուն. ²⁴⁾ ուրախանայ սիրտս բոտեսոյն։ Այստեղ ընդհատում է Հայերգի օրինակը, որի մէջ մի միջանկեալ ոտանաւորից յետոյ սոյն տաղը շարունակում է փ և բ տներով. չկան՝ չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ց, ւ յանգաւոր տները. ²⁵⁾ շարապ. ²⁶⁾ ծաղկունքն ամէնն ելնուն յառաջ. ²⁷⁾ աղուոր ու թառ. ²⁸⁾ մեր օրինակում՝ սիրտն բան վառ. ²⁹⁾ մաշիս. ³⁰⁾ վրանով. ³¹⁾ կարօտով. ³²⁾ Ո յանգով է՝ լուսանայր, գայր. ³³⁾ սնոյց. ³⁴⁾ որոշէ. ³⁵⁾ այնով. ³⁶⁾ կ'ասէ թէ ան հերիք։

Այս տաղի մէջ օտարազգի բառերից ուրանք անհասկանալի են թերեւս գրչի շնորհիւ. անծանօթ բառերից նշանակելու է հետեւեալները. կերահ ու պէկեահ — ժամանակ անժամանակ, տեղի անտեղի. ատապ — ամօթիսածութիւն, պատկառանք. պէհալ — անուժ, վատուժ. սէր, նոյն և սար — գլուխ. թաճ — թագ. ֆիրեաթ, փէրեաթ, ճիչ, աղաղակ. պէյուշ —

ուշաթափ. տուշ, թուշ (*լինել*) — հանդիպել. սուշ —
մեղք, յանցանք. շէրպէթ նոյն եւ շարապ — օշարակ.
սապահ — առաւօտ. սէլամ (*տալ*) — ողջունել: Պարսկե-
րէն թուրքերէն յերիւրած նախադասութիւններ են
«Էմրի թուրա պաշամ» [թ որազ, ալլպուլ, պըքօվ,
որւ սլա աւազ» որ ուրիշ տառադարձութեամբ էլ
նշանակուած է տարբերութիւնների մէջ, թէև աղճատ.
այդ նախադասութիւնն այսպէս կըթարգմանուի. «Թող
քո կեանքդ երկար լինի, սոխակ, խօսի՛ր, կանչէ՛ (կամ
տըվ - աղօթէ՛ օրհնէ՛). «Ձրդան կղոֆտան, ա՛ պուլ-
պուլէ՛ (նոյն և ֆուրդան, ֆիրդան գըֆտան) նշանա-
կում է «այ ողբասաց սոխակ»:



4. ՏԱՂ ՍԻՐՈՅ

Մաքուր պատկերով նման հրեշտակի,

Անգին մարգարիտ լեռեալ ընդ ոսկի,

Սէթ և Աբիսողոմ, Յովսէփ սխրալի,

Անձամբ վայելուչ ի մէջ ամենի:

Է՛ զօնճա տըհուն ¹⁾ ծաղիկ նռնենի,

Պտղով ²⁾ բարունակ և դալար ուռի,

Դու քաղցրահայեաց փթթեալ վարդենի,

Որմաւ և շուշան և նշդարենի:

Ուներդ է քաշած քան զթափած թուր,

Թարթափդ քո թեք քան զնշտար սուր.

Սպանանես գերես օրն հազար բիւր.

Զէհէ հիւսնու սուրաթ ու զէհէ սիւմպիւլ ³⁾:

Դու նազուք թափուս և մղրի թութէք ⁴⁾

Կարկաջող կաքաւ, գարնան ծիծըռնակ

Պիւլպիւլ ու զումրի, լաթիֆ ու զիրաք

Յաւտհօտի սաբահ և փէքեարմէլէք ⁵⁾:

Ոսկի ի Հնդկաց ակն պատուական:

Շուրջ գամ և փնտրեմ զքեզ ⁶⁾ անխափան.

Ես եմ քեզ խնդրող և վաճառական

Ի բազում մտաց ծածուկ և անգուման ⁷⁾:

Նայեաց մէկ ընդ իս աչօքդ մէստան ⁸⁾,

Կամ քաղցրիկ խօսէ ⁹⁾ կամ տո՛ւր պատասխան.

Ճիկէրում քէպապ, կեօզում եաշի դան,

Կէճէ վէ կիւնտիւզ էլարըմ Փիրղան ¹⁰⁾:

Սուպհ ու սէհէրսէն, իւզուն նուրի նար.
Տօքէրսին աղզընտան նէպաթ ու շէքէր¹¹).
Ով որ դու նալիս և առնուս նատար¹²),
Լինի քան զմոմ՝ պողպատ է թէ քար:

Սիրով լափեցիր ու արիր սիրտս խոց¹³).
Կուտապիմ և այրիմ որպէս զհնոց.
Սրտէս կութափի յոլով հուր ու բոց,
Զալդ աստուածագիծ պատկերդ քո ինձ ց'յց¹⁴):
Քո մէջքդ է բարակ քան զուռի վարոց.
Սպիտակ ատամունք, մարգարտէ շարոց.
Դու քաղցրատեսիլ և պտուղ¹⁵) ծառոց,
Այդ շիրին լեզուէդ տուր երկու զրուց.
Քան զշամբալ եղեգն¹⁶) ելեր ես շիտակ.
Ուներդ է կամար որպէս զաղեղնակ¹⁷).
Աչերդ¹⁸) է պայծառ որպէս զծովակ,
Ղարդ եղալ¹⁹) ի ներս, եղալ անճարակ:
Թարթափդ է խանչար՝ ինքն պողպատ զուտ²⁰),
Ալտով զիս հարիր²¹) և արիր խուրդ ու մուրտ.
Ամպի պէս ածիր ինձ սաստիկ կարկուտ,
Թէ ես մեռանիմ, քեզ շահ չէ, օգուտ²²):
Շըթունքդ է քո լար, կլափդ է ամպար²³).
Տաշիս և կինամոն. նաֆալի²⁴) թաթար.
Զմուռ և հալուէ, ու լալ և ճօհար²⁵),
Զօհրա մուշթարի, և արուսեակ պայծառ²⁶):
Վեր ես գնացեր քան զսինօթար²⁷),
Նոնենի դրախտ և սէլվի չինար²⁸).
Լեզուդ է շիրին քան զՄսրալ շէքէր.

ի քո թշնամւոյն շըլինքն թէպէր²⁹⁾:

Քան զգարնանալին մանուշակ³⁰⁾ հոտով,

Որպէս քափուր³¹⁾ վարդ պայծառ և գունով.

Ծագիս քան զարեւ երկնից կամարով,

Զերդ զբոլորեալ ես լուսին լուսով:

Երբոր կուշարժիս ոտօքդ ըռաւան³²⁾,

Ուր որ դադարես, այն տեղն է պօստան³³⁾.

Հանց սիասաթով իջնուս քան զիսան³⁴⁾,

Դրեր զգերիս զընճիլ ու զընտան³⁵⁾:

Խե Աղթամարցի՛ դու բարեաց անջան³⁶⁾,

Ունայն թզենի, փշաբեր անդաստան.

Թո՛ղ զսէր աշխարհիս այս անցաւորական,

Զի դառն ու լեզի և լոյժ անպիտան:

Անօրէնութիւնքդ քո բարձրացան,

Որպէս բեռն ծանր սաստիկ ծանրացան,

Երբոր մտանես ի հող և ի տապան,

Ապա աւաղես, դառնաս փոշիման:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Տաղս օրինակուեցաւ մեր սեփական գրչեայ տաղարանից, որ գրուած է 1595 թուին. նոյնը կար և 1617 թուի տաղարանում, և հրատարակուած է Հայերգի մէջ. մեր տաղարանում վերնագիրն է «Տաղ սիրոյ գեղեցիկ, Գ, լեզուաւ հայերէն, թուրքի և աճամի, անուշ և լաւ ասա՛. Գրիգորէ Աղթամարցւոյ ասացեալ» Տարբեր ընթերցուածներն այն են.¹⁾ Է՛ զաւնճադահահան.²⁾ պտղով.³⁾ զէհուսն ու սուրաթ, ու զէհէ սունպուլ.⁴⁾ «զի⁵⁾ է Ուռնու սուրաթ, զի⁶⁾ է Ուսամպօլ.⁷⁾ տառւս, թոյուզ, մղրէ, մօրղի, թութակ,⁸⁾ յաւհաւտի սաբայ հոտհոտեց, փէ-

քալ, մալաք, ⁶⁾ փտռեմ, փնտռեմ, բեղի, ⁷⁾ յանդի-
ման, ⁸⁾ նայեաց, մաստան, ⁹⁾ բաղթրախօսի՛ր. ¹⁰⁾ «Ճի-
կարում բապապ, կաւզի եաշի ղան, կէճայ ու կուն-
տուզ էլարամ ֆիրղան».¹¹⁾ «սապահ ու սահար իւ-
զուն նուր ու նառ, տաւքար աղզընտան նաւպաթու
շաբար».—«Դու նուսահասան ուզուն նուր ու նար,
թօքար աղզինտան նաբաթ ու շաբար»—«սուրբ հու-
սահար սան ուչուն ուրնար աղզինտան նաբաթ ու շա-
բար».¹²⁾ նազար. ¹³⁾ խոց. ¹⁴⁾ սուրաթդ ինձի ցոյց.
¹⁵⁾ բան զպտուղ. ¹⁶⁾ բան զշամբդ եղեգան. ¹⁷⁾ ուն-
բերդ, աղեղնակ. ¹⁸⁾ ~~աչուերդ.~~ ¹⁹⁾ եղէ. ²⁰⁾ խանձալ,
պաւղպատ, ²¹⁾ այդով զիս խոցեցիր. ²²⁾ բեղ ի՞նչ շախ
օգուտ. ²³⁾ շրթ. է շաբար, կլ. է ամրար. ²⁴⁾ նաֆէի
²⁵⁾ զմուռ, ջուհար. ²⁶⁾ զաւհրայ մուշթարին ւարեա-
պայծառ—զօհար, զօհալ. ²⁷⁾ սենոբար, զսիւն ու բար.
²⁸⁾ նոնենւրյ, նոնենեաց, սալվի չինար. ²⁹⁾ տապար.
³⁰⁾ մաշոկ. ³¹⁾ ճերմակ. ³²⁾ ըռովան. ³³⁾ բուրաստան.
պաւստան. ³⁴⁾ հէնց, զղան. ³⁵⁾ զանձիր և ի զընտան.
³⁶⁾ «և Աղթամարցի բարեաց ես դու ջան»:

Թուրքերէն և պարսկերէն բառերից մեկնուում են
հետեւեալները. ղանձա, ղօնձա—կոկոն. տղիան,
ղահան—բերան. տավուս, տայուզ, թավուս—սի-
բամարդ. մողի, մօղի,—թերես մուրդ—թոչուն,
հաւք. լատիֆ ու զիրաք—վայելուչ և ժիր. փէքեար
մէլէք (մալաք) պատկեր հրեշտակի. մէստէն, մաս-
տան—արբած. նազար, նատար—անցաւ, ուրախ.
նաֆայ, նաֆէ—մուշկ. զօհրայ—աստղիկ մոլորակը.
մուշթարի—իւպիտեր մոլորակը. սինոբար սենոբար
—եղենիների ցեղից (ծառ). ըռաւան, ըռովան, (ըա-
վան)—գնայուն թեթեաբայլ. սիասաթ—շուք, բարձր
իշխանութիւն:—Թուրքերէն և պարսկերէն բերուած

ոճերից և դարձուածներից շատերն այնքան խառն ընթերցուածներ ունին, որ դժուար է վերականգնել նոցաբնագիրը. մի քանիսը կարելի է մի որոշ ձեւի բերել, օրինակ թուրքերէն նախադասութիւնը «Ճիկէրում քէպապ, կեօզում եաշի ղան, կէճէ վէ կիւնտիւզ էլարըմ ֆիրղա» Ասիրտս այրուած, աչք և ունքս արիւն, գիշեր և ցերեկ կոծում եմ.» սակայն միւսները թէւ առանձին բառերը կարելի է բացատրել, բայց տարբեր ընթերցուածքների պատճառով միտքը մի քանի տեսակ կըլինի: Հաւանական է որ այդ օտարազգի նախադասութիւնները կամ ոճերը պարզ փոխառութիւններ են ժամանակին հանրածանօթ օտար երգերից. այսպէս մտածելու տեղիք է տալիս սոյն երգի մի դարձուածը, որ է «զէհէ հիւսնու սուրաթ և այլն» կամ «զէ հուսնու սուրաթ.» այս տեսնում ենք Պարսից Զամի երգչի եւսուֆ և Զուլիխա երգի մէջ. նա ասում է Զուլիխայի դէմքի գեղեցկութեան մասին, որ տեսնուած և լսուած չէ հիւրիփէրիների մէջ նորա նմանը. «Նա դիդա ազ փարի, նա շնիդա ազ հուր զի հուսնի սուրաթ ու լատիֆ ի շամայլ և այլն.» հուսնի սուրաթ—վայելուչ պատկեր: Աղթամարցու գործ դրած օտարազգի ոճերի ուղիղ ընթերցուածքը թերևս կարելի կըլինի այդպիսի համեմատութեամբ վերականգնել:



5.

Դու դրախտ Եղեմալ տնկեալ յԱնեղէն
ի յելս արևու տեղիք լուսեղէն,
Ծառօք ու ծաղկօք, պտղօք շողեղէն,
Զոր շրջափակեալ պահէր սերովբէն:
Որպէս զնախաստեղծն գեղուղէշ¹⁾ ես.
Տիպ²⁾ և գաղափար Տեառն Աստուծոյ ես.
Պատկերով պատուեալ քան զՄիքայէլ ես,
ի մէջ հողեղինացս³⁾ հըեղէն ես:
Թափանցիկ լուսով ակն արևու,
Լիալիր լուսին, մեղմով գնաս դու.
Աստղ վառ ի վառ⁴⁾, ցօղ առաւօտու,
Եւ աւետաբեր հողմն հարաւու:
Լեառն Արարատ, Կարմեղ⁵⁾ և Սինալ,
Թափօր և Ահերմոն նման Բեղելալ,
Լեառն Վարագալ և Գալիլիալ⁶⁾,
Ով ի քեզ դիմէ շուտ⁷⁾ փարթամանայ,
Վտակ Եղեմալ և գետ Յորդանան.
Սելովմալ աղբիւր և ջուր ես լուզման.
Անկեալ եմ հիւանդ մերձ առ քո դրան,
Սպասեմ հանապազ ես առողջութեան:
Փալուն մարգարիտ ի մէջ սատափին
Յահագնատեսիլ յատակս ծովին,
Որ գաս ի ցամաք ձեռօք լողորդին,
Եաղութ ու զմրութ, գոհար մեծագին:

Վերնոց վեհագոյն և աշխարհի զարդ,
Ուշիմ և խոհեմ անօրինակ մարդ.
Նոճի, մըտենի, սանտալի և սարդ⁸⁾՝,
Նումանի ծաղիկ և փթթեալ վարդ։
Յարեալ շըջեցալ ի մէջ գիշերոյս,
Խնդրեցի և գտալ զիմ աչացս լոյս.
Եկ իմ գեղեցիկ քրքում և նարդոս,
Ոչ թողից զքեզ մօտ ի տուն գինւոյս։
Կեփազեան⁹⁾ ոսկի և մաքուր արծաթ,
Վարսօք վայելուչ որպէս զթուխ սաթ,
Ով որ տեսանէ, դառնալ մաղրսկաթ
Անդուր և անդադար կու առնէ ֆէրեաթ։
Է՛ մահի թամամ, դահանի թանկտար,
Քաման ապրուսար, է՛ մէստունիկար¹⁰⁾։
Երբոր դու խփես¹¹⁾ զաչերդ կամկար
Սրտեր խոցոտես համարով հազոր։
Սումպուլ և ըռեհան, լալէ ու գուլզար¹²⁾։
Պուլպուլ կուվանտէ ամաթ բաբա հար¹³⁾։
Նալա¹⁴⁾ ու ֆիղան մէքունաթ սէհար,
Պաշաթ քի պինամ ըռահ և տիլտար¹⁵⁾։
Նարնջի ծաղիկ, կալիսի տերև՝,
Դու վարսաւորեալ արմաւենւոյ ձե՛,
Փայլես փալլի տաս¹⁶⁾՝, սիրամարգի¹⁷⁾ թե՛,
Խնդութեան տեղիք, աչացս լոյս քե՛։
Հոտդ քո բուրէ վարդ ու շուշանի,
Մուշք և մանուշակ հովիտ ծաղկալի.
Նարկիզ, նոնոֆար, բլուր կնդրի,

Ամենայն մտաց ես ախորժելի,

Իու սքանչելագործ քան Զօրաւոր Խաչ,

Ահաւոր տեսլեամբ քան զկարի քաջ¹⁷⁾),

Ելանես գնաս, ես լինիմ յառաջ,

Կամ խօսիր ընդ իս կամ նստիր ի յաջ:

Գիշեր և ցերեկ եմ ես երերուն,

Ոչ կենամ ի դուրս, ոչ օդիմ ի տուն¹⁸⁾).

Սահրամ ու քարթամ համ չու ու մաճլուն¹⁹⁾),

Իմ ռաւզամ ֆըրհաթ տիլի մէ փուռ հուն²⁰⁾):

Զարկած է վրադ քեզ կարմիր վրան²¹⁾),

Բազմիս ահաւոր ւ ես քեզ յանդիման²²⁾).

Սիրտս փափագի և կալ ի դողման,

Ոչերս է կարօտ տեսոյդ աննման²³⁾):

Զիարդ բաժանիմ 'ի քէն կենդանի,

Առանց քո տեսուդ շունչս կուքաղի²⁴⁾)

Չունկ թարկ պըդահամ, կուլի խօշըուի²⁵⁾),

Գարբինամ հազար ճավրի սիթամի²⁶⁾):

Օրհնութիւն Փրկչին ի քեզ իջանի,

Կամօքն Աստուծոյ կենաս կենդանի,

Գունդք չար ալսոցն ի քէն հալածի,

Զերդ զարեգակն կենաս կենդանի²⁷⁾),

Է՞ր ունայնաբան ես²⁸⁾) Աղթամարցի.

Ալո կեանքս անցաւոր է, քեզ յուշ լինի²⁹⁾),

Ալժմ յօժարութեամբ ես մեղաց գերի,

Բայց յետոյ լինիս ողորմ ու լալի:

գրուած տաղարանից և համեմատուեցաւ Հայերգի մէջ
հրատարակուած օրինակի հետ, տարբերութիւններն են,
1, գեղադէշ. 2 տիպար. 3. և ի հողեղինացս սուրբ և.
4 լուսափայլ. 5 Սալարաթ, Կարմէլ. 6 Քուհի Սրան-
գէլ և Քէմիայ. 7 զուտ. 8 սաթ. 9 կեփաղեայ 10 «է
մահի դանդան, դըհանի թանկտար, եք աման ապրու
սարմաս ի նիգար.» 11 «Երբ 'ի կան ածես.» 12
կուհար. 13. «բլբուլ գօ անտայ ամառ բա հաբար»
14 լալէ. 15 ըռաւհ կ. ըռուք ի տիլտար. 16 չիք.
17 սիրամարգու. 17 ա. բան ըղարի բաջ. 18. «
աղօթեմ ի տան, ոչ կենամ ի տուն. 19 հէմ չին ու
մաչին. 20 տիլի փուռ մահին, 21 «զարկած է վերէդ
գեղ կանաչ վրան.» 22 հետևում են այս տողերը.
«Չողշանկ շաբարին ըռու արմաղան, ու էլ պաղի զի ու
է նուրի դանդան.» 23 հետևում են այս տողերը
«սէռօղ պուտիմ փէշի տու մէհուան, մառանջ մէր ւ
ավ, սալուարի խուպան.» 24 կուբաղուի. 25 «չունկ
թարկ պըտէ համ գուլի խօշ պուխ» 26. գաբրինամ,
ջուվր. 27 փայլես ի յերկրի, 28 ունայնաբանես. 29
յուշ լիցի. ուշ լինի:

Օտարազգի բառերից բացատրւում են հետևեալ-
ները. մահ մահի լուսին. թանկտար - անձկալի, քա-
սան ալրուսար - ք. աղեղնակ, ծիածան, ա. անձրեի
ամպ. - անձրեաբեր ծիածան. սումպուլ, սունպուլ -
նունուֆար ծաղիկ. լալէ - կակաչ (ծ). գուլզար -
վարդենիք. ամբողջ տողեր ու դարձուածներ կան,
որոնք թէւ աղճատ են, բայց անհասկանալի չեն երե-
ւում. այսպէս են. «պուլպուլ կուվանտէ ամաթ բա-
բահար, նալս ու ֆիղան մէքունաթ սէհար, պաշաթ
քի պինամ ըռահի ի տիլտար» պարսկերէն խօքերը, որ
նշանակում են. «երգեցիկ սոխակն եկաւ գարնանն, հե-

ծեծանք և սռւգ էր անում արշալուսին, թէ կըլինի՛ որ
տեսնեմ սիրականիս ճանապարհը.» աղջատ է. «սահ-
րամ ու քարթամ համչու ու մաճլուն, իմ ռաւզ ամ
ֆըրհաթ տիլի մէ փուռ հուն» որի մէջ համշու մաճ-
լուն նոյն և մուաջնուն, նշ. ինչպէս խելագար. իմ
ռաւզ, թերեւ իմ ռուզ, նշ. այսօր. տիլի, տիլ, դիլ—
սիրտ. փուռ պուր, —լիքը. նոյնպէս է «չունկ թարկ
պը դահամ, կուլի՛ խօշըռի, գար բինամ հազար ճավրի
սիթամի» որ պարսկերէն նշանակում է. «մինչև իսկ
մոռանամ (թարկը տամ—թարկ պըդահամ), անու-
շահոտ վա՛րդ, թէ տեսնեմ, հազար առատութիւն,
վայելչութիւն.» իսկ եթէ տարբեր ընթերցուածներին
նայելով, թարգմանենք, այս նախադասութիւնների իմաս-
տը կըփոխուի:



6. ՏԱԴ ՎԱՍՆ ՍԻՐՈՅ

Դու ես արեգակ լուսին ի լման ¹⁾։

Զկայ քեզ նման ի լազգս ²⁾ մարդկան։

Բաշտ քի շափի ի սուֆ ի քանհան,

Ե՛ նով ռասիդան գուլի՛ բա բօստան ³⁾։

Պայծառ արուսեակ ի լառաւօտու,

Ես եմ քեզ փափագ, ի լինսնէ ⁴⁾ ես հեռու.

Իմ շուշան ծաղիկ, կարմիր վարդն դու

Չը դուր օմատ բի մարամ բա տու ⁵⁾։

Ծաղկեալ ⁶⁾ գեղեցիկ ոսկի մատրասալ,

Մէհրապ է քաշած զուներդ ⁷⁾ ի նմա,

Աչուերդ է ղանդիլ ⁸⁾ ի ներքոյ նորա,

Կարդան անդադար անդ քարամ ու լահ ⁹⁾։

Թոյ բէթլլ մամուր և մաքաթ ու լալ ¹⁰⁾,

Կամ ալդ հեռաւոր ճանպահդ որ քեզ կայ.

Բըստանամ թասպի, բըփուշամ խրդայ ¹¹⁾,

Լինի՛ թէ աչուերս ¹²⁾ քեզ արժանանալ:

Իմ սուն ¹³⁾ իմ սրտի և իմ ուրախութիւն.

Իմ շունչ ու հոգի և իմ կենդանութիւն.

Աչացս առաջի ես քուն և ի լարթուն.

Դուշման ի թօրայ շօվաթ ջիգառիսուն ¹⁴⁾։

Նորաբոյս ծաղիկ և տունկ նշենի.

Երեսդ է պայծառ քան զթեր ¹⁵⁾ վարդի.

Ե՛ ամպարփըշան հուրի ու փահրի ¹⁶⁾,

Հինդ ու Խորասան քո մէկ տեսն չարժէ ¹⁷⁾։

Երթունք է շաքար, խօսունք ¹⁸⁾ ղանդ է.
Լեզուդ ի բերանդ անգին ջուհար է.
Համասփիւռ ծաղիկ հոտն ի քէն բուրէ.
Զէ ¹⁹⁾ քեզ օրինակ, քոյդ ալ փարթամ է:
Ուներդ է քաման, թարթափդ է քո բեր.
Զահանդար լաշքար մէքունի թապտիր ²⁰⁾.
Թըով ու սրով շատ ոք խոցեցիր.
Զի է հուքմ ու հրաման, զի է սահդալ դիլ ²¹⁾:
Առիւծ ի շամբին բազկօք զորաւոր,
Ամէն կենդանեաց դու ես թագաւոր.
Ես աղաղակեմ ձայնիւ ²²⁾ ահաւոր,
Սարսափին, գողան տարելքս ²³⁾ բոլոր:
Կարմիր և սպիտակ խնձոր անտառին.
Ծրար ստաշիսց և իւղ մեծագին.
Վազելով գնաս ի վերալ լերին
Նման այծեմանց և որթունցն եղեն:
Բերկութեան բաժակ, ոչ ապի լալաթ ²⁴⁾,
Ես եմ ծարաւեալ, արբո՛ ինձ մէ կաթ.
Փիալալ ու շիրին շիրալ ի շարբաթ,
Ուզանդալ քունի դար ի քարամաթ ²⁵⁾:
Քան զքաջ արծիւ բարձրագնաց ²⁶⁾ ես.
Գեղեցիկ բազալ լստիվ ու թառ ²⁷⁾ ես.
Փալլուն սիրամարգ ոսկեփետուր ես.
Քաղցրաձայն կաքաւ մրդ ի սահրալ ²⁸⁾ ես:
Սուրաթդ է սատաֆ, մարգարտակը բունք ²⁹⁾,
Ե՞ փըստալ դահան ³⁰⁾ ու բարակ շրթունք.
Սուտակ դահանակ ու շորեալ ակունք

Բիւրեղ քանդակեալ մատունք և ատամունք³¹).
Քան զգարնանալին ամպ³²) քաղցրահոսան,
Վայելուչ գունով զերդ զծիածան.
Հողմով տարութեր³³) քո հերդ դեղձան,
Երբ որ ելանես սահրալ ու սէլրան³⁴):
Կիպարի, նոճի, կանանչ ձիթենի,
Նարինճ ու թուրինջ տունկ պալասանի。
Տաւսիսխ սինոբար, շըմշատ ու տալքի³⁵),
Միշտ կանաչ կենաս քան զնշդարենի:
Զօրն կումաշիմ ի հոգս և ի դուսալ³⁶).
Վախեմ թէ լինիմ ի քեզնէ³⁷) ջուտալ.
Կամ զիս մոռանաս ու տաս ինձ ջաղալ
Բութիմ խիրամանդ քուրդքար դիւռնալ³⁸):
Նոր գարուն եղե, և նոր առաւօտ.
Նով բոլբոլ³⁹) ամատ դումրի ու հօտհօտ.
Նոր ձախ արձակեց, նոր նստաւ⁴⁰) ի մօտ,
Նով գուլ ու սամպօլ⁴¹) ես էի կարօտ:
Հեռացաւ ու գնաց լինէն տրտմութիւն.
Եկն եհաս ալսօր ինձ ուրախութիւն.
Ալլ փափագ չունիմ, իմ փափագս դուն,
Քաղուի լոյս աչացն քո թշնամւոյն:
Քեզ միշտ հովանի բանն հայրական.
Միքայէլ հրեշտակն քեզ պահապան.
Աշխարհիս⁴²) կենաս անփորձ և անսասան,
Անմեղ⁴³) և անարատ և անապական:
Ա՛յ Աղթամարցի՝ դու ծառայ մեղաց.
Աւուրքդ գնաց ահա՛ ի ձեռաց.

Զգաստացիր հիմիկս⁴⁴⁾ և կաց ի լոտաց,
Լալով աղաչէ զՔրիստոս Աստուած։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. Տաղս օրինակուեցաւ մի գրչեայ
տաղարանից որ գրուած է 1647 թուին. Նոյնը հրա-
տարակուած է Մանանայի և Հայերգի մէջ։ Տարբեր
ընթերցուածները սոքա են. ¹⁾ ի լրման. ²⁾ օրինակ ու որ-
դիս. ³⁾ ու սուֆի քանչան, է՛ նա ոուղիդայ գուլի
բաղ բօստան. ⁴⁾ յիսնէ ⁵⁾ չըրա դէրա մաթի բէ մա-
րամ բէթու. ⁶⁾ սախթեալ. ⁷⁾ ջահերդ. ⁸⁾ աշերդ է
զարթել. ⁹⁾ անդադար զքալամուլլահ. ¹⁰⁾ գուբէթը
մամուլ և մատաթուլլահ. ¹¹⁾ բըստանամ թղբէհ բար-
փօշամ խրխայ. ¹²⁾ աշերս. ¹³⁾ սոնս. ¹⁴⁾ դուշմանի չու-
մա շաւի ջիգարխուն. ¹⁵⁾ զթերթ. ¹⁶⁾ է ամպար ֆըջան
հուրի ու փարի. ¹⁷⁾ զհինդ ու զխորասան մէկ հայելի
արժի. ¹⁸⁾ ու խօսքդ. ¹⁹⁾ այն. ²⁰⁾ ջահանդայ շտու-
լաշքառ մէքունի թաբիր» ²¹⁾ զէհէ հուքմ, չէհէ սաղ-
թադիլ. ²²⁾ երբ աղաղակես ձայնիւդ. ²³⁾ երեսքդ. ²⁴⁾
բաժակ և ապուհայեաթ. ²⁵⁾ զբդէ փեալայ և շիրին
շարբաթ, մուրդաղեդաքուն, դար ի բարամաթ.» ²⁶⁾
բարձրագնայ. ²⁷⁾ թաւ. ²⁸⁾ մղրի սահար. ²⁹⁾ մարդար-
տայ բրտունք, ըտունք. ³⁰⁾ է՛ բստայ դըհան. ³¹⁾
մանտրուն ատամունք. ³²⁾ ցող. ³³⁾ տատանի. ³⁴⁾ սէ-
քան. ³⁵⁾ դօտաղ սինու բաշում շատուտ ուբի. ³⁶⁾ եղու-
սայ. ³⁷⁾ ի բէն. ³⁸⁾ բութիմ խիրաթ մանթ բարդի
դիւանայ. ³⁹⁾ նաւ բլբուլ, ⁴⁰⁾ նստայ. ⁴¹⁾ սմբուլ. ⁴²⁾
յաշխարհս. ⁴³⁾ ամբիծ. ⁴⁴⁾ յիմիկս։

Այս տաղի մէջ գործ դրուած պարսկերէն և թուր-
քերէն բառերի մեծ մասը, մանաւանդ նախադասու-
թիւններն ու առանձին ոճերը, տարբեր ընթերցուած-
ներ շատ ունին և աղճատուած են երեւում։ Աչքի է

ընկնում այն, որ պարսկերէնի գաւառական արտասա-
նութեան կրկնակի օրինակներ էլ կան, ինչպէս՝ նով
ուսիդան (կարդա՞ նաւ ուսիդահ, բուր փոշամ (բար
փուշամ), դուշման ի թօրայ շօվաթ (թերեւ՝ դուշ-
ման ի տուրա շաւատ) նով բօլոօլ (նաւ բուլբուլ),
նով գուլ (նաւ գիւլ) և այլն։ Երդիչներն անշուշտ,
պարսից աշուղների և բանաստեղծների գործ դրած
ձևերն են նոյնութեամբ կրկնել, խառնելով նոցա խօս-
քերն իրենց տաղերի մէջ։ Աղթամարցին թերեւ Գիր-
դուսու Շահնամէից առած է «Ջահանդար լաշքար
մէքունի թապտիր» նախադասութիւնը, որովհետև Ջա-
հանդար կամ ջիհանդար (աշխարհակալ) Շահնամէի
երգչի սիրած խօսքն է։ Առհասարակ այս 6 տաղը իւր
օտարազգի բառերով և դարձուածներով կարելի է հա-
մարել մի արևելեան երգի փոխադրութիւն կամ թարգ-
մանութիւն։



7. ՏԱԴ ՎԱՍՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Աստուածանկար պատկեր յօրինեալ ի Ալրարողէն¹).
Բանիւ քո բարդեալ դիզես²) զամենայն պարգև
հողեղէն³).

Գարուն գեղեցիկ եկեալ հալածես զսառն ի ջրէն.
Իրախտ վայելուչ ծառօք փըթըթին ոստունքն⁴)
ի ճըղէն.

Երկիր զարդարեալ բուսով ընդունիս զլուսն յարեէն.
Զքեզ ամալ հրաշագեղ ածես ծծես⁵) ցող անծայր
ի ծովէն.

Ե՛ դու մշտաբուղիս աղբիւր, արբենան արարածք
ի քէն.

Ընտրեալդ ի բազմաց բարի սովելոց տաս յանմահ
հացէն.

Թեսօք քո թեթև թռիր, զօրանաս⁶) յԱմենազօրէն.
Ժամանէ ի գիտութիւն, ժրաշան մեղուդ ի բնէն.
Ի լերունքդ ի ներս շրջիս, ժողովեալ⁷) զփոշին ի
ծաղկէն.

Լուսափալլ դամբար կազմես քաղցըրահամ կերակուրն
ի քէն.

Խտըդտա՛⁸), Տիգրիս և Եփրամ, զովացն զերկիր հա-
մօրէն.

Ծաղիկ ծիածան գունով⁹), վայելուչ, ու շաղն ի
վերէն,

Կանաչ բարունակ տնկեալ, բերկըրութեան բաժակ
ի յորթէն.

Համասփիւռ ծաղկի նմանիս, կամ փթթեալ վարդն
ի կոկոնէն.

Չափդ արծուոյ, ձայնէ, բարձրացիր և ել ի հաւէն¹⁰).
Նողեալ հալածին թռչունք զէտ զինուոր ի թա-
գաւորէն.

Ծաճանչ ի լարփոյն առնուս և վառիս լանաղօտ
լուսոյն¹¹).

Մաքուր մարգարիտ պայծառ, ծնեալ ես լերկնալին
ցօղոյն¹²).

Յոսկոյն ես արաբացւոց, արձակես նշոյլ հրեղէն.
Նարդոս և քրքում, զմուռ և հալուէ ի հնդկա-
կանէ¹³).

Եարեալ պաղպաջուն ակունք, կալծ կարմիր ի փի-
սոն զիտէ.

Ոսկէակ¹⁴), լակինդ և ակատ, կարկեհան, բիւրեղ
սառնօրէն.

Չքնաղ վալելուչ տպազ, զքեզ գովել չկարէ հողէ-
ղէն.

Պատուական մաքուր արծաթ, և սրբեալ անօթ
լուսեղէն.

Չահդ վառ ի վառ անշէջ, փարատես զիւաւարն 'ի
տանէն.

Ուամիցս գլուխ զինուոր, զօրանաս ի Զօրաւորէն¹⁵).

Սարդ և սօս, կիպար և նոճ, տապանակ ի լան-
փոյտ¹⁶) փայտէն.

Վարսաւոր ծառդ կենաց, զքեզ պահէ սոսկալի
քրոբէն¹⁷).

Տուն իմաստութեան շինեալ ի յահեղ հզօրի ըազ-
կէն,

Պամեալ խնամես զազինս, և թափես¹⁸⁾ ի չար գա-
զանէն.

Ցանկամ տեսանել զքեզ, իմ պսակ փառաց լուսե-
զէն.

Իիւսեցից երգս տաղից, զքեզ գովեմ հոմերոսօրէն¹⁹⁾ ,
Փափագիմ վարուցդ անբիծ, սուրբ Անտօնի ի թե-
բալիդէն²⁰⁾ .

Քո Արարողին տամ փառս, օրհնութիւն յաւի-
տեանս ամէն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Այս տաղը, որի բովանդակու-
թիւնն և վերնագիրն իրարու համեմատ չեն, օրինա-
կուեցաւ 1617 թուին գրուած տաղարանից. վերնա-
գիրն էր «Գրիգորիս կաթուղիկոսի ասացեալ վասն սի-
րոյ և ուրախութեան» ։ Նոյնը լոյս է տեսել Հայերգի
մէջ (120) որտեղ վերնագիրն է «Տէր Անտօնի Թերայեց-
ւոյ ասացեալ» ։ Սակայն այս մի պարզ հակասութիւն
է վերջին երկու տողերի (փ և ք) մտքին. Հայերգի
մէջ սոյն տաղի վերջին չորս տողը կրկնում է մի այլ
տաղի շարունակութեան մէջ (եր. 57) այն է ց, և, փ և
ք, տները. այս էլ անշուշտ սխալ պէտք է լինի, որով-
հետեւ միւնոյն տողերն երկու զանազան երգերի մասն
կազմել կարող չեն: Տաշեանի ցուցակին նայելով,
այս տաղն ունի «Երկտողք Ա—Ք.» (794). մեր օրի-
նակում այդպիսի բաժանում չկար: Տարբեր ընթեր-
ցուածներն են. ¹⁾ յարարչէ. ²⁾ տեղիս. ³⁾ հոգեղէն.
⁴⁾ ոստիւքն. ⁵⁾ ասեն ծնես. ⁶⁾ զօրացիր. ⁷⁾ ի բլուռնբդ

ի վայր շրջիս ժողովես. ⁸⁾ խտտա՛. ⁹⁾ փունջ. ¹⁰⁾ ի
յաւէն. ¹¹⁾ լուսէն. ¹²⁾ ծովէն. ¹³⁾ ի Հնդկաց տանէն.
¹⁴⁾ ոսկեակ. ¹⁵⁾ զօրական ի զօրավարէն. ¹⁶⁾ յան-
փուտ. ¹⁷⁾ սրովրէն. ¹⁸⁾ փրկես. ¹⁹⁾ ւիւսեսցուք զերգս
տաղիս, զքեզ զովեմք սուրբ և հոգեղէն. ²⁰⁾ տէր
Անտօն ի Թեթափէն:



8. ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Արեգակնաժամանակ գեղով լի լուսին ի տասն ու հնդէ¹⁾։
Աչեր ծով ի ծով ունիս, սոսկալի վարսաւոր սըովըէ։
Ուներդ²⁾ է քաշած կամար զինչ գարնան աղեղն
ի յամպէ։

Լեզուդ տապարզի շաքար, քո շըթունքդ վարդի
թերթ է։

Աստղ վառ ի վառ պայծառ ելանես ի յառաւօտէ։
Սքանչելատեսիւ դիմօք Միքալէլ հրեշտակն ես
միթէ։

Չի կալ³⁾ օրինակ այլ քեզ, հողածին զքեզ չի
բերէ⁴⁾։

Հազարաց բիւրոց ընտրեալ, ո՞ր լեզու զքեզ դը
ըուատէ։

Վարդ ես վայելուչ գունով, ցող առնուս ի վաղօր-
դայնէ։

Սըևն երբ ի քեզ առնու, հիանալ ով⁵⁾ զքեզ տե-
սանէ։

Հոտով քո արբեալ թմրիմ, երբ քաղցրիկ հողմ⁶⁾
ի քեզ հնչէ։

Փնջեալ երփնազարդ ծաղիկ, զքեզ բերած ի բարձր
լեռնէ։

Հիրեկ, կինամոն, նարդոս, պալասան ի լեզիպտոսէ.
Քրքում և զմուռ, շուշան, դու ազնիւ քան զգու-
հար⁷⁾ հալուէ։

Եղեգնախնկոց նմանիս⁸⁾, գտանիս ի լեառն Սինէ

Համասփիւռ և մըտենի, մանուշակ ի կանաչ թփէ.
Ակն դահանակ, սուտակ, ելեալ ես ³⁾ ի փիսոն
գետէ.

Տպազ մեծագին, յասպիս, շափիղալ ⁹⁾, լոյսն ի քէն
ցալթէ ¹⁰⁾.

Ակատ, կարկեհան, յակինդ ¹¹⁾, մարգարիտ ելեալ
ի ծովէ.

Մաքուր անարատ ոսկի, դու եկեալ ես յԵւիլատէ.
Յապառաժ քարաց, վիմաց ¹²⁾ մեծագին ակունք
նորոգէ.

Առեալ ի ցօղոյ երկնից ի յոստրէն ¹³⁾ մարգարիտ
շինէ.

Մացառաց, ոստոց, փշոց հոտ անուշ զվարդ ըն-
ձիւղէ ¹⁴⁾.

Կազմեալ ի ջրոյ պատկեր, է զարմանք ¹⁵⁾ թէ ալ-
պէս առնէ.

Պատկեր ես քո Ստեղծողին շաղկապեալ ի քառա-
նիւթէ.

Տիպն ¹⁶⁾ իւր գոյացոյց զքեզ, նկարեաց և եհան ¹⁷⁾
յարգանդէ.

Զիանդ օրինակ տամ քեզ յանշնչից և յանզգայէ ¹⁸⁾.
Յալս իմ այլեցած սրտէս զայս ընծալ ընկալ, ըն-
դունէ ¹⁹⁾:

Գրիգորիս Աղթամարցի արտասուօք զքեզ աղաչէ,
Թէ ինձ ողորմիս ասէք, և Փրկիչն ձեզ պարգևէ:

գրուած տաղարանից, հրատարակուած է և Հայերգի
մէջ։ Հ. Տաշեանցի ցուցակում առաջին տողն այսպէս
է. «Արեգակնաժիայլ գունով ես սուրբ կոյս ի լուսին
ի տասն և հնգին»։ իսկ վերնագիրն է «Տաղ ի վերայ
սուրբ Աստուածածնի ասացեալ Գրիգոր կաթուղիկոսէ
Աղթամարցւոյ» (460 և 1008)։ Տաղիս մէջ երեք տո-
ղերը «յապառաժ քարաց վիմաց» «առեալ ի ցօղոյ» և
«մացառաց, ոստոց» նմանութիւն է, անշուշտ, մի ու-
րիշ հին երգչի։ Համեմատութեան համար բերում ենք
այստեղ Առաքելի տաղից մի հատուած, որ հանել ենք
1659 թուին գրուած գանձարանից. այդ տաղի վեր-
նագիրն է «Գանձ Շողակաթին տեսլեանն էջմիածնայ»։
Հատուածի տողերն այսպէս են։

«Ի գերբկաց վիմաց ապառաժ ակունք ի շարոց
Կոյս քեզ լանջանոց։

Ոստրէոց զեռնոց հատ մարգարտանոց
Կոյս քեզ բազկանոց։

Ի մընառիւծոց ծիլ ոսկէքաղոց
Կոյս քեզ գնդանոց։

Անծին կենդանոց ապրիշում թելոց
Կոյս քեզ քօղալնոց։

Սիզական որդնոց շարժական տըզոց
Կոյս քեզ վառ ներկոց։

Խոտական զեռնոց կազմած գործ ճըճոց
Կոյս քեզ գլխարկոց։

Մացառաց, փշոց, անպտուղ ոստոց
Կոյս քեզ վարդխաղոց։

Յանբերրի ծառոց կոխաբեր տնկոց
Կոյս քեզ հոտ խնկոց.

Եղնէ երեոց, վալրի անասնոց
Կոյս քեզ մուշկ հոտոց»:

Այս հատուածի մէջ ուշադրութեան արժանի են
Հին ընտանեկան կեանքի վերաբերեալ բառերը, զոր-
օրինակ շարոց—լանջանոց, մարգարտանոց—բազկանոց,
գնդանոց, բօղայնոց, գլխարկոց, վարդիսաղոց, ապրի-
շում թելոց, ոսկէքաղոց և այլն:

Տարբեր ընթերցուածներն Աղթամարցու տաղի
մէջ հետևեալներն են. ¹⁾ ի տասնուհինգն է. ²⁾ ուն-
քերգ. ³⁾ չկայ. ⁴⁾ բան զքեզ չբերէ. ⁵⁾ առնէ, հիա-
նալով. ⁶⁾ հով. ⁷⁾ զկուզար. ⁸⁾ նման ես. ⁹⁾ ելանես.
¹⁰⁾ շափիւղայ. ¹¹⁾ յակինթ. ¹²⁾ վիմանց քարանց. ¹³⁾
ի յոստորէն. ¹⁴⁾ զվարդն ծուլէ. ¹⁵⁾ չէ զարմանք. ¹⁶⁾
տէրն. ¹⁷⁾ նկարեալ եհան. ¹⁸⁾ յանզգայից. ¹⁹⁾ զայս
ընծայ ընկ ընդունէ:



9.

Ահա ալգիք մեր ծաղկեցան, բուրեն զհոտ անմա-
հութեան.
Ե'կ, ցանկալի՛ իմ աննման, և զուարճասցուք ի բու-
ըաստան:
Բղխեն ստինքդ կաթն և գինի, մեղք ի շրթանցդ
քո կաթի,
Որով հոգիս իմ փափագի, և նուաղեալ լոյժ տո-
չորի:
Գեղեցկագեղ քաղցրաբարբառ սէր՝ քո ունի խոր-
հուրդ անճառ,
Իմանալի արև պայծառ, լուսաւորեալ միտս իմ խա-
ւար:
Դրախտ վալելուչ, ծառ պտղաւոր, քաղցրաճաշակ
և գինի՝ նոր.
Ոիրով արբեալ քո ահաւոր ի սենեկին խորհրդա-
ւոր.
Երևեցան ծաղկունք լերկրի, նստցուք ընդ քեզ ի
պարտիզի.
Երգեցից սէր քեզ, սիրելի՛, սիրտ իմ ի սէր քո տոչորի.
Զօրհանապազ ընդ քեզ կալով, զգեղ դիմաց քո
դիտելով,
Եւ խօսակից քեզ լինելով, ստէալ ստէալ հարիմ
տապով.
Եթէ լաչաց մարմնոյս ծածկիս, մտաց աչօք ինձ
երեխս,

Բնակեալ ես դու յիմում սրտիս, ծրարեալ ունիմ
զքեզ ի հոգիս:
Ընտրեալ ոսկի սովերական, ակն լուսատու և կար-
կեհան,
Տպակ և կայծ լոլժ պատուական, խնդրեմ զքեզ
ես անխափան:
Թէ տեսանեմ զքեզ կըկին, լուսաւորի միտս իմ
մթին.
Եւ տամ համբոյը շրթանց քոյին, նա վերանամ ես
ի յաղին:
Ժուժկալութիւն չունիմ անգամ, զգիշեր նստեալ
ողբամ,
Վառեալ սիրով քո տապանամ, զաչս ի յանհասս
համբառնամ:
Ի տեսլենէ քո արբեցալ, ահեղակերպ լուսոյ ար-
քայլ,
Հոգիս բերկրեալ ընդ քեզ ցնծալ, սիրով ի սէրդ
կապեցալ.
Լուսապայծառ երեխ նա, որթոց եղանց նման
իսալտալ,
Ահա եկեալ ի թեմանալ, զգեստաւորեալ ի բոսորալ:
Խունկ և հալուէ է ծաղիկ դաշտաց անճառելի
հոտ քո բուրեաց,
Ելից զաշխարհո համատարած, լորմէ մարդիկ եղեն
արբած.
Մաղիկ փթթեալ առաւօտու, հոգւոյս մարմնոյս
իշխանն դու,

Լուսաբորբոք ակն արևու, օդ քաղցրութեան ի
հարաւու,

Կարմրացեալ ի գոյն վարդի ի մէջ ծաղկանց երևելի,
Բարձր ուղեց արմաւենի. Գլխոյ իմոյ լեռ հովանի:
Հոտ քո անուշ տարածեցան որպէս զվարդ և զշու-
շան,

Դու ես քրքում և պալասան, քիմք մեր ի քէն
պարարեցան.

Ճայն տուր և ինձ, ով տարփալի, նուազեալ հո-
գիս լոյժ ծարաւի,

Մարմինս մաշեալ ալլագունի տեսլեան լուսոյ քո
սիրալի

Ղամբարափալ ճաճանչ ես, որ վառեցեր սիրտ իմ
առ քեզ,

Որ միշտ արթուն կայ վասն քո, ոչ դադարի սակս
լալոյ.

Ճեմեալ ընդ քեզ ի յանդաստան, փափագելով քո
սուրբ տեսլեան.

Ահեղակերպ և հրաշազան, աչք մեր ի քէն նուա-
զեցան...


Հայերգ, 54,

ԾԱՆ. Հ. Տաշեանի ցուցակին նայելով, Վիէն-
նայի ՄԽ. ձեռագրի 1786.ին գրուած այս տաղն ու-
նի ռուսը Ա—Ք. (Եր. 794):

10.

Մարմինս զհոգիս զըկէ և պտհէ զօրն լալական.
Դատաւորին լալով ասաց թէ արա ուղիղ դատաս-
տան.
Աստուած, երբ զմեզ ստեղծեց և ի քեզ արար ա-
պաստան,
Թէ դու իրաւունք արա, որ սոքա լինին միա-
բան.
Դատաւորն անիրաւ էր, դէմ չառնէր ուղիղ դա-
տաստան.
Ահ ի լԱստուծոյ չունէր, անպատկառ ի լորդոց
մարդկան.
Եղուկ իմ ալրի հոգիս ճար չունի քան զանմահ
փեսայն,
Միայն է դարձեալ հոգիս ընդ հեռացեալն վայրե-
նական.
Ի մեղաց իմոց տանջիմ և կենամ միշտ ի լերեր-
ման,
Հոգիս ի մարմինս կուլալ, հակառակ են, չեն միա-
բան.
Ոչ դուր ոչ դադար առնում, ալլ շըջիմ ես թափա-
ռական.
Ոչ ունիմ ես տեղ մ' դարան կամ աւուր մ' երկու
ապաստան:

Գրիգորիս, ճարակ արա և զմեղաց աղտն ի քէն
լուա՛,
Ե՞ր անհոգ ի քուն կենաս անցաւոր աշխարհիս
վրալ,
Ահա օր մահուն կուգալ, գէթ բժիշկ և ճար քեզ
արա՛,
Յէգսուց հրաւիրակն գալ և ասէ քեզ աստի գնա՛:
Հայերդ, 150.



11.

Եղուկ, հազար մի վայ. որ մեղօք աղտեղացալ.
Ղեկօք ես ի ծով իջալ և հողմով չարին վարե-
ցալ.
Կանգնեալ դիտելով ծանեալ, զերծելոյ հնար իսկ
չկալ,
Ես եմ մոլորեալ ծառալ, ծառալ, զիս գերեալ չարն
սատանալ:
Լուսով քո լիս ակնարկեալ, զիսաւարեալս լուսաւո-
րեալ,
Ինձ լոլս և ճարակ չկալ ելանել ուստի ես ան-
կալ.
Գերի և անիմաստ ծառալ մերկ մտեր աներկըալ
ուսալ.
Պամից խնամողն է նա, զգերելոյ դարձն կամենալ:
Իսկ դու ի մեղաց զղջալ և լուսով ին նա հաւատա,
Գթած և ողորմած է նա, զմաքսաւորն և զպո-
նիկն լիշեալ.
Որ և նոյն Աստուածն է նա, ամենի զղջալն ա-
ղերսալ:
Պամից բոլորից արքալ, զսառնացեալս ի սէր քո
վառեալ,
Իսկ ես լանցաւոր գտալ, զի ի քէն մեղօք հեռա-
ցալ.
Սիրով զիս ի քեզ կապեալ, զիս արժան տեսոյդ քո
արալ,

Նաև եղկելոյս գթա՛, անառակ որդւոյս ողորմեա՛.
Ահա ի քէն մերժեցալ և զգութ սիրոլդ մոռա-
ցայ.
Սովամահ եղեալ շըջիմ, յագարակ դիւացն ընթա-
ցայ.
Եւ ալդ ճշմարիտ ծանեալ, զիմ մեղաց մուրհակն
ընթերցալ.
Լերինքդ ի կշռել կուգալ և մեղաց իմոց թիւ ոչ
կայ.
Ե՛ ողորմելի ծառալ զքեզ յանձն Աստուծոյ արա՛,
Թէպէտ քո չարիքն յոլով, որ թուով ի հաշիւ
չկայ,
Վերստին մեղաց թափեա՛ և յուսով դու խոստովա-
նեա՛,
ի կոյսն ապաստան լե՛ր դու և նովաւ զԱստուած
աղաչեա՛,
Նշանաւ խաչին նորա անդադար զքեզ տեառնա-
գրեա՛,
Զրօքդ զիս ոռոգեա՛, զի տապօք չարին զօրացալ,
Կարկամեալ մեղօք մեռալ, վերստին, տէ՛ր, զիօ
նորոգեա՛.
Դու զիմ ցաւս ապաքինեա՛, քաջ բժիշկ Յիսուս,
ողորմեա՛,
Եւ քեզ փառք ալժմ և ապա անզրաւ կենօք
յարակալ.

ԾԱՆՕԹ. Ընդօրինակուեցաւ մի տաղարանից, որ

յիշատակարան չուներ. Համեմատ է Ներս. Դպր. 2եռ.
Ցուցակի հետ (եր. 61), որտեղ վերնագիրն է «ուաղ
Գրիգորիսի Աղթամարցւոյ է.» այդ չկար մեր բնուգըրի
մէջ: Սկզբնատառերն յօդում են խօսքերս «Եղկելի Գրի-
գորիսն ասացել է թվին ԶԿՐ» (964—1515թ.):



12. ՏԱԴ ԱՍՏՈՒԾԱՏՈՒՐ ԽԹԱՅԵՑԻՈՅ ՆԱՀԱՏԱԿԻՆ.

Վաճառական մի հայ և լոյժ ճարտասան,
Մխիթար Բաղիշեցի և աստուածածան,
Գնաց նա ի սահմանս Ատրպատական,
Ի Ղում և լիրադ և ի Խորասան,
Եհաս ի Սամարխանտ և ի Բուխարա,
Եմուտ ի Հինդիստան, և անտի գնաց
Ի մեծ հռչակաւոր քաղաքն Խըթա,
Ուր մուշկն է պատուական Էրէոլ նաֆա.
Խթա մերձ սահմանաց Զինումաչինայ,
Եւ անդ լինի ռաւանդ, չքնաղ չինին գալ.
Անդ է նահատակեալ առաքեալն Թովմա
Հարեալ ի Մշտիհէ, այսպէս գրեալ կայ;
Եւ են աշխարհն ամէն կոապաշտ հաւասար,
Ոչ ճանաչեն զՈրդի, Սուրբ զՀոգին կամ զՀալր...
Անտեղեակ և անծանօթ են այսմ շնորհի
Աշխարհն Խաթայու, զոր այժմ լիշեցի...
Ելեալ ի Խաթայու զօրքն հեծելին
Եւ դէպ ի լարեելս չըւեալ գնացին,
Զւ ազգ մի բովանդակ զամէն գերեցին,
Որ ի լեզուս իւրեանց Խալմուխ կոչէին.
Զմանկունքն գերելոցն վաճառէին:
Յորմէ առեալ տղայ մի Մխիթարին,
Տանէր խնամք նորա զինչ իւր զաւակին.
Առաջ դէպի աշխարհս մեր դիմեցին,

Զծով և զցամաք նոքաւ կոխեցին,
Եւ յԱլանաց երկիրն ժամանեցին:
Մատնեցին զտղայն երկրի իշխանին,
Եւ նա ընչիւք իւրովք գնեաց երեքկին.
Բերեալ ի բուն քաղաքն Մխիթարին
Զբարի մանուկն ընտրեալ և առաքինին,
Հաճեալ հաւանեցաւ կամօքն իւրային,
Ասաց թէ մկրտիմ լանուն Յիսուսին.
Հաւատամ ես ի Հայրն և Որդի նորին
Երկրպագեմ հոգւովս Հոգւոյն ճշմարտին,
Մի կամք և մի բնութիւն որ ոչ բաժանին:»

Զանունն Աստուածատուր նորա կոչեցին.
Ուսաւ լեզու և գիր նա վաղվաղակի,
Ննորհօքն աստուածատուր և Հոգւոյն տեղի,
Անձամբն էր վայելուչ, բնութեամբն բարի,
Տեսլեամբն գեղեցիկ և զարմանալի:
Զընթացս երանելոյն տեսեալ սատանի
Զհաւատքն որ առ Քրիստոս և գնացքն բարի,
Լինէր հեղձամղձուկ յառաջին չարի,
Բորբոքեաց զնախանձ դառնութեան բոցի...
Դրդեաց ի բարկութիւն զորդիս Հագարի:
Ասեն զմանկանէն. Զաւակ է թուրքի.
Գնացեալ առ ամիրայն չարախօսեցին.
Եկեալ զԱստուածատուրն յատեան կոչեցին...
Ի բաց թող զՔրիստոս և զհաւատ նորին,
Թէ ոչ, տանջեմք զքեզ սաստիկ և ահագին...
Ետուր նա համարձակ զպատասխանին,

Թէ Քրիստոս է Աստուած, և ես ծառալ նորին,
ինձ ուրանալ զՔրիստոս է անհնարին...
Բազում թախանձանօք զնա աղաչէին,
Քաղցըութեամբ խ սելով և ոչ կարացին.
Կապեցին զձեռան ի յետսն և հարկանէին.
Տանէր նա խնդութեամբ տանջանաց նոցին:
Յաւուրս ձմերայնոյ զնա մերկացուցին,
Բերեալ գետն ի ներքոյ սառին անցուցին,
Որպէս սուրբ Քառասունքն ի Սեբաստիին.
Անցաւ ընդ հուր և ջուր՝ ստ երգոյն Աաղ-
մոսին:

Ապա ի թիկնամէջն հուր վառեցին,
Հրով զհող սթափն ի յոտքն ագուցին.
Սրով բոլոր մարմինն ծակոտեցին
Եւ կայծակունս հրոյ ի յերկու ձեռին:
Ոչինչ նա համարէր զկսկիծն ահագին,
Սիրով էր նա վառեալ ի լոյսն վերին,
Արիաբար եկաց դէմ Բելիարին,
Եղե նա պատարագ Հօրն երկնաւորին:
Բերեալ զբարեյաղթ վկայն Քրիստոսի,
Ետուն զնա ի մօլլայն, զի օրէնք ուսցի.
Ասեն. Մանկութիւն է դորա փոխելի.
Դառնալ ի Քրիստոսէ սա վաղվաղակի:
Սովով և ծարաւով յոլով տանջեցին,
Ի հուր և ի ջուր զնա անցուցանէին.
Ամիսս ութ անխնալ զնա չարչարեցին,
Շարժել ի հաւատոց զնա ոչ կարացին:

Եկեալ ժողովեցան չարքն ի միասին,
Պատեալ շուրջանակի և քարկոծէին.
Քան զշուն և զգազան զնա գիշատէին,
Էսու զվախճան անդէն ի յասպարիսին։
Ամաց էր ութ և տասն վկայս գովելի,
Որ վկայեց անուանն Տեառն Յիսուսի.
Էր թիւն ինն հարիւր վտթոռն և ութի,
Յորժամ Աստուածատուրն նահատակի։
Առ մեծ ըաբունապետն ճառս այս յարմարի,
Որ և անուն նորա Գրիգոր Խորջորջի։
Սորին սպասաւորէ և աշակերտի
Գրիգորիս, մականունս է Աղթամարցի։

ԾԱՆՕԹ. Առաջին անգամ լոյս է տեսել Հ. Ալի-
շանի Սիսականի մէջ (Եր. 531), թերեւս կրծատած
ձեռվ, ինչպէս երեսում է բազմակէս նշաններից։



13.

1. Յամէն առաւօտ և լոյս
Պիւլպիւն էր նստեր լալգւոյս
Քաղցրիկ ձախնէր վըշ վարդոյս
Կասեն թ'արեկ ել ալգւոյս:
2. Մարդիկք Աղամայ զարմուս
Ականջ դրէք իմ խրատոյս,
Դէմքն է ծաղկեր իմ ալգւոյս
Այս իմ նորատունկ ալգւոյս:
3. Քար եմ բերեր գետերուս,
Փռւշ եմ բերեր սարերոյս,
Ցանկ եմ շիներ այս ալգւոյս,
Կ'ասեն թ'արեկ ել ալգւոյս:
4. Չեմ ելներ ես այս ալգւոյս,
Այս իմ նորատունկ ալգւոյս,
Յալս ուրախարար տեղւոյս
Եւ ալս նորաշէն տներոյս:
5. Պրքար եմ շիներ լալգւոյս,
Յերկնից ցողն ի մէջ պրքոյս,
Քաղցր և բարեհամ ջրոյս⁸
Բոլորն է ծաղկունք և բոյս⁹:
6. Դեռ չեմ տեսեր կեանք և լոյս
Կ'ասեն թ'արեկ ել ալգւոյս.
Ի՞նչպէս ելնեմ ես ալգւոյս

⁸ չիք. ⁹ լոյս.

Այս իմ նորաշէն տներուս:

7. Տունկ եմ տնկեր այս ալգւոյս
Սպիտակ ու կարմիր վարդոյս,
Կանանչ բարունակ որթոյս,
Ողորմ եմ նստեր յալգւոյս:
8. Դեռ չեմ կերեր այս պտղոյս,
Կ'ասեն թ'արեկ ել ալգւոյս.
Ի՞նչպէս ելնեմ ես ալգւոյս,
Այս իմ նորաշէն տներուս:
9. Մէջն է ծաղկեր այս ալգւոյս
Կարմիր ու սպիտակ վարդոյս,
Դեռ հոտ չեմ առեր վարդոյս
Կ'ասեն թ'արեկ ել ալգւոյս:
10. Չեմ ելներ ես այս ալգւոյս
Այս իմ նորատունկ ալգւոյս
Այս ուրախարար տեղւոյս
Եւ այս նորաշէն տներուս:
11. Հնձան եմ շիներ ալգւոյս,
Կարաս եմ շիներ գինւոյս,
Դեռ չեմ խմեր յայս գինւոյս,
Կ'ասեն թ'արեկ ել ալգւոյս:
12. Քաղեմ փունջ մի վարդ ալգւոյս,
Դնեմ մէջ կարսի գինւոյս.
Ուրախանամ այս հոտոյս,
Կ'ասեն, թ'արեկ ել ալգւոյս:
13. Ղումրին է նստեր ալգւոյս,
Գարուն է հասեր ծաղկոյս,

Պլպլուկն է բացուեր վարդոյս,

Պիտէր տեսնեմ կեանք և լոյս:

14. Վարդն է խոռվ պիւլպիւլոյս,
Չայնս է կտրեր ի յանձնոյս,
Հոգիս ելեր է մարմնոյս,
Աւաղ ասացէք զգերոյս:

15. Եկն ի խնդիր այս վարդոյս,
Հրեշտակն է կանգներ հոգւոյս,
Յահէն կապեցաւ լեզուս,
Եհան զհոգիս ի մարմնոյս:

16. Տարան ի յեզեր հողոյս,
Դրին զիս ի մէջ գըոյս,
Ահա որ ելալ յայգւոյս
Այս իմ նորաշէն տներուս:

17. Ծաղկունքն վերացան յայգւոյս.
Վարդն թափաւ իմ այգւոյս.
Յանկն քակեցաւ յայգւոյս,
Ահա որ ելալ այգւոյս:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Այս երգն օրինակուեցաւ մեր սեփական տաղարանից, որ գրուած է 1695 թուին. սորա մէջ երգիս վերնագիրն այսպէս է. «Տաղ վասն եպիսկոպոսի միոյ, որ նոր այգի անկեր է, և դեռ այգին պտուղ տվեր չէ, նա մահու օրն հասեր է, և ի ժամ հոգէվարութեան զայս աղերս ասեր է» Մեր տաղարանում երգի հեղինակը նշանակուած չէ: Պր. Ն. Մառի տուած տեղեկութեաւը նայելով (Изъ лѣтнѣй поѣздки, 31), երգիս վերնագիրն է «Տաղ գեղեցիկ ե-

վերայ այգոյ հոգոյ և մարմնոյ» և հեղինակն է Գր. Աղթամարցին. պ. Մառի օրինակի մէջ չկան 2, 4, 5, 6, 12, 13 և 14 տները: Այս երգը հրատարակուած է մի քանի անգամ. 1) Բազմավեց 1845 թ. 2) Arm. pop. Songs, Venice, 1852 թ. 3) Գամառ Քայլի. պայի Աղգային երգարան, Ս. Պետերբուրգ 1856 թ. 4) Մ. Միանսարեանցի Քնար Հայկական, Ս. Պետերբուրգ 1869 թ. և 5) Վիէննայի Հանդէս Ամսօրեայ, 1896 թ.: Այդ հրատարակութիւնների մէջ այս երգից կան և աւելուր տներ, որոնցից նշանաւորներն այստեղ յառաջ կը բերենք, Քնար Հայկականին համեմատ նշանակելով այն տների կարգը, որոնք աւելի են և տարբեր:

2. Յամէն առաւօտ և լոյս

Գայրիէլն ասէր հոգւոյս.

Արի Եկ Ել այս այգւոյս,

Այս իմ նորատունկ այգւոյս:

3. Ինձ չէ պարտ ելնել յայգւոյս,

Գէմ չար փուշ կալ պատերուս,

Չեմ կարեր ելնել այգւոյս

Այս իմ գեղեցիկ այգւոյս:

5. Ուռ եմ տնկեր այս այգւոյս,

Զտակն եմ ջրեր այս տնկոյս,

Դեռ չեմ կերեր այս պտղոյս,

Կ'ասեն. Արի Ել յայս այգւոյս:

7. Զմուտն եմ փակեր այգւոյս,

Դեռ չեմ բացեր զփակ դուռս,

Այս իմ յամը բակազմ այգւոյս

Կ'ասեն. Արի Ել յայս այգւոյս:

8. Զուր եմ բերեր ձորերոյս
Զցուրտ և բարեհամ աղբիւրս
Դեռ չեմ խմեր ի ջըռյս
Կ'ասեն. Արի՛ Ել յայս ալգոյս:
11. Ծաղիկ եմ ցաներ այս ալգոյս
Կանաչ ու դեղին ծաղկոյս
Դեռ չեմ քաղեր ի ծաղկոյս
Կ'ասեն. Արի՛ Ել յայս ալգոյս:
12. Տունկ եմ տնկեր պատերուս
Նուշ և նըշենի և ընկուզ
Դեռ չեմ կերեր ի սլողոյս,
Կ'ասեն. Արի՛ Ել յայս ալգոյս:
14. Բերէք ինձ մրգաց ալգոյս
Վարդ և գոյն զգոյն ծաղկունս
Առնում հոտոտիմ անուշս,
Այլ չեմ ելներ ի յալգոյս:
15. Պլառուն զոշէր յայգոյս
Առաւօտէ մինչեւ լոյս.
Յօդն իջանէր ի յամալոյս
Կ'ասեն, Արի՛ Ել յալգոյս:
16. Գաբրիէլն եկաւ հոգւոյս,
Յահին կապեցաւ լեզուս.
Խաւարեցաւ աչացս լոյս,
Հալի՛ֆ իմ կարճ արեռուս:
17. Ուռն է կանաչ այս ալգոյս
Խաղողն է հասեր ալգոյս.
Կ'ասէ. Արի՛ Ել յալգոյս,

Ալս իմ նորաշէն ալգոլս:

18. Առին զհոգիս ի մարմնոյս,
Հանին զիս ի յիմ այգոյս,
Փամ է, որ ելնեմ լալգոլս,
Ալս իմ գեղեցիկ ալգոլս:
19. Փլաւ նորաշէն ալգիս
Չորացաւ զինչ կալը տունկ և բոլս:
Թարշամեցաւ գեղ մարմնոյս,
Կ'ասեն. Արի եւ լալգոլս:
20. Հանին զիս ի յիմ այգոյս,
Պլավովն կանչէր այգոյս,
Յօդն իջանէր ի յամպոյս,
Յամէն առատօտ եւ լոյս:

Թէև այս 24 տունը մեր խմբագրութեան մէջ
նոյնութեամբ չկայ, բայց, ինչպէս բաղդատութիւնից
կերևի, նոցանից շատերը կամ զանազան տողերով նը-
ման են միմեանց և նոյն խմբագրութիւնից են, կամ
թէ ոչ կրկնութիւն են նոյն մտքերի այլ ձևերով։ Ար-
դեօք Գր. Աղթամարցու յօրինած բնագերը ո՞րն է,
տակաւին որոշեւ կարելի չէ. ակներև է որ եղած են
և յաւելումներ։ Վերջերս լոյս տեսաւ և մի այլ օրի-
նակ (Բազմավ. 1897 մարտ), որը շատ համառօտ է
(10 տուն) և աւելի նման է մեր տաղարանի օրինակին.
Նորա մէջ չկան իսկապէս 5, 8, 9, 12, 17 տները, իսկ
4 և 10, որ նոյնպէս չկան, կրկնութիւն են միւնոյն
բառերի։

Հ. Տաշեանի ցուցակով այս տաղի վերնագիրն է
«Տաղ ընդդիմադրական ուրախութեանց» (եր. 521 և

854) «տաղ ի վերայ կտրիճ մեռելի ասայ» (Եր. 812).
«տաղ ընդդէմ դիմադրական ուրախութեան» (869).

14.

Յորժամ զիս ինձէն գտայ, և ես ընդ իս սակաւ
խօսեցայ.

Զմիտս իմ առ իս ըերի, զայս գիրքս որ յէս գայ
մնայ.

Թէ Եկ ալրեցած հոգի, լաց զքո չարիքդ լարակայ.
Սակաւ մի անդորր տուր քեզ, որ ի լինք դարձեալ
կարենայ:

Մի կաս, մնալով լոր ես, զի չկայ ճարակ թէ մնայ.
Խաբէ բոլորէ զքեզ, սիրաբար ի քեզ մերձենայ.
Պատրէ քաղցրագոյն բանիւ, յետոյ չար ճաշ դառ.
նայ քեզ տայ.

Հայեաց տեսանել լայտնի, թէ ալ օր պահեալ
կայ մնայ¹),



¹⁾ Ցուց. Զեռ. Ներսիս. Դպրոցի. 64.

ՅԱԻԵԼՈՒՅ

ԱՎԻՔՍԵՆԴՐ ՄԵԿԵԴՈՆԵՑՈՒ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ ԿԸՓԵՆԵՐԸ

Աղէքսանդր Մակեդոնացու պատմութեան¹⁾ նախնեաց թարգմանութեան «Հին և ընտիր» բնագիրն ժԳ. դարի վերջերում Խաչատուր Կեչառուեցին, «անյարմար և շաղփաղփ» համարելով, «զտել» «քերել» է «քերողօրէն» և թողել է մեզ, կարելի է ասել, ոչ այնքան աղճատուած, որքան տեղ տեղ կրճատուած և տեղ տեղ էլ ոտանսւորներով համեմած մի խմբագրութիւն, որն լետոյ մի կողմից ընդարձակուել է նորանոր տաղաչափական յաւելուածներով և միւս կողմից դարձեալ կրճատուել է։ Այսպիսով հետզհետէ հանդէս են եկել նոյն պատմութեան համառօտած օրինակները։

Համառօտելու նպատակը մեզ պարզ չէ. որովհետև այն ժամանակ, երբ տեղի էր ունենում հին բնագրի մասերի յապաւումն, նոյն այդ ժամանակ և լինում էին նոր յաւելումներ։ Այսպէս՝ ամբողջի մէջ սկզբից մինչև վերջը հիւսուել են տաղաչափական մանր բարառնութիւններ կամ նկատողութիւններ, որոնք այն ժամանակի անունով կոչւում են կափալ կամ կափալ,²⁾ իսկ շատ

¹⁾Պատմութիւն Աղէքսանդրի Մակեդոնացւոյ. Վենետիկ 1842.

²⁾Այս բառն յայտնի էր դեռ ԺԱ. Դարում Գրիգոր Մագիստրոսին, որ ասում է «տաղասացու-

ձեռագրերի մէջ դրուել են նաև պատկերներ, ո-
րոնց տակը կամ շուրջը գրուած են այդ կաֆաները:
Ինչպէս Հ. Յակ. Տաշեանի բազմահմուտ ու-
սումնասիրութիւնից¹⁾ իմանում ենք, այդ կաֆա-
ների հեղինակներն են Կեչառուեցին Խաչատուր,
Գրիգորիս Աղթամարցին և սորա աշակերտ Զա-
քարիա Եպիսկոպոս, որ Կեչառուեցու տոհմից է:

‘Սերկայ յաւելուածիս մէջ լոյս են տեսնում
բոլոր այն կաֆաները, որոնք մենք հանել ենք
«Պատմութիւն Աղէքսանդրի աշխարհակալի» վեր-
նագրով գրչեալ օրինակից այն կարգով և դասաւո-
րութեամբ, ինչպէս կար այդ ձեռագրի մէջ²⁾:’

Թիւնք Արաբացւոցն սովորաբար վարժաբանութեամբ
մրցեալք միայօդ աւարտեալ գծի, զոր դուք կափայ
անուանէք»։ (տես Հազարտողեան ոտանաւոր ևայլն)։

¹⁾ «Աւսումնասիրութիւնք Ստոյն Կալիսթենեայ վա-
րուց Աղէքսանդրի, գրեց Հ. Յակոբոս վ. Տաշեան,
Վիէննա 1892»։

²⁾ Դժբաղդաբար մեր սեփական գրադարանի այդ
գրչեայ օրինակն ուրիշ թղթերի և գրքերի հետ կո-
րուստի մատնուեցաւ 1892 թուին մեր տեղափոխու-
թիւնների ժամանակ։ Թէև նոցանից մէկը՝ մեր գրչեայ
տաղարանն՝ յետոյ գտնուեցաւ, բայց միւսները տա-
կաւին չեն յայտնուել։ Նոյն ձեռագիր պատմութիւնը
գրուած էր բամբակեայ թղթի վերայ շղագրով, սկըզ-
բեց և միջից մի քանի թերթ այլ թղթի վերայ նոտ-
րագիր, յիշատակարան չունէր, կաֆաների առաջին
տողերը գրուած էին կարմրագեղով, և լուսանցքնե-

Ալդտեղից երևում է, որ նոյն օրինակում կաֆաների թիւն է 42. նոցանից մի քանիսն՝ ըստ Հ. Տաշեանի՝ Գրիգորիս Աղթամարցին¹⁾ է յօրինել, իսկ մի քանիսը Խաչատուր Կեչառուեցին²⁾: (Յաւելուածիս 43 և 44 կաֆաները մեր ձեռագրում չկալին):

Որքան մեզ լայտնի է, Ս. Եջմիածնի մատենադարանում Աղեքսանդրի պատմութեան հինգ օրինակ կար Նոցանից մէկը, որ է 1752 թիւ ունեցող ձեռագիրը, կեղծ Կալիսթենեսի նախնեաց թարգմանութիւնն է, գրուած «Ներ վշտապատում ժամանակի «ՌՄՒԺ» կամ 1767 թուին «ի նուաստ գրչէ տիրացու Մարգարայ ի նահանգէն Երազօւսու, որ կոչի Մաշկերտ, որդւոյ տէր Գրիգորի»: Քանի որ համեմատութիւններ անելու ժամանակ չենք ունեցել, գրչութեան արժանիքի մասին բան չունինք առելու: Ալդ օրինակի մէջ կաֆաներ Երկրորդ օրինակը 1751 թիւ ունեցող ձեռագիրն է՝ Երկիջեան մաքուր գրուած նօտրագիր՝ ունի կաֆաներ 9—13 երես և 125. ից մինչև վերջին երես. ալդ ձեռագիրը լաւագոյն օրինակներից մէկն է ե-

ըռմ սևագեղով նշանակուած էր կվ. պատկերներ չունէր. դիրքն էր միջակ, հին բարառնութիւնների մէջ հիւսուած էին և նոր ոտանաւորներ:

¹⁾ Կաֆայ 20, 23, 24, 26, 32, 38, 39 և 44:

²⁾ Կաֆայ 1, 21 և 35:

թեռմ մեզ։ Մնացեալ երեք օրինակները, որոնք
645, 1749 և 1750 թիւ կրող ձեռագրներն են,
միանման խմբագրութիւն ունին. նոցանից 645
ունի նաև պատկերներ ¹⁾։ Որքան կարողացած ենք
հարեանցի դիտել այդ ձեռագրների կաֆաները, ոչ
մէկի մօտ նշանակուած չէ նոցա հեղինակի անունը։
Բացի 1750 թիւ ձեռագրից՝ միւս երեքն (645,
1749 և 1751) ունին իրենց վերջում կեչառուեցու
անունով լիշտակարաններ, բայց ոչ միանման։
Թէև բոլոր այս գրչեալ օրինակներից զատ մեր
ձեռքն անցել են և ուրիշ շատ օրինակներ, սակայն
դեռ մի այնպիսի օրինակ չենք տեսել, որի մէջ կա-
ֆաների հեղինակը նշանակուած լինէր. ուստի մեզ
մնում է բաւականանալ այն ցուցումներով, որոնք
գտնում են Հ. Տաշեանի ուսումնասիրութեան և
Հ. Ալիշանի Սիսուանի մէջ ²⁾։

Եթէ լաւելուածիս կաֆաների ոճին և տաղա-
չափութեանը նայելու լինինք, կըտեսնուի նոցա
մէջ մեծ տարբերութիւն և կարելի կըլինի ասել
թէ նոքա միւնոյն հեղինակի գործ չեն։ Խաչատուր
կեչառուեցու գործերից մեզ ծանօթ են մի քանի

¹⁾) Թ. 645 գրուած է 1645 թուին, թ. 1749
— 1756-ին և թ. 1750 — 1655-ին։

²⁾) Տես Ուսումն. Առ. Կալ. Եր. 108 — 137։

Սիսուան 399 և 400 ծանօթ։

Հատուկտոր ոտանաւորներ¹⁾, որոնցով ամփոփ գաղափար կազմել նորա ոճի և տաղաչափութեան մասին կարելի չէ։ Ինչ որ Գրիգորիս Աղթամարցուն կը վերաբերի, նորա տաղերի ոճի և չափի մասին գաղափար տալ կարող են սոյն հրատարակութեան մէջ հանդէս բերուած ոտանաւորները։ Եթէ լաւելուածիս կափաներն իրենց ոճով և տաղաչափութեամբ երկու խումբ²⁾ բաժանենք, կը տեսնենք, որ երկրորդ խմբի կափաներն ունին մեծ մասով 15 ոտնեան չափ, որ Աղթամարցու միւս տաղերի մէջ էլ կայ։ Այս ասելով, մենք չենք ուզում պընդել թէ երկրորդ խմբի բոլոր կափաներն Աղթամարցին է յօրինել։ կամ թէ ընդհակառակը Խաչա-

¹⁾ Տես Ուս. Ստ. Կալ. եր. 108, 117, 118, 119 և այլն. Նոր Ժողովածու, պրակ Գ. Սիսուան, 399։

Հայր Յ. Տաշեանի հաղորդած տեղեկութիւնների վերայ (Ուս. Ստ. Կալ. 124 և 125) աւելացնելու է և այն, որ Ստեփանոս Օրպէլեան իւր ՈՂբէն յօրինել է 1300 թուին Կեչառուեցու խնդրանօք, անուանելով նորան «Մարունակետ հոգւով լցեալ», «անյաղթ հուտ շնորհօք ծաղկեալ», «սըրազան եղբայր»։ Ողբի վերնագրի մէջ յեշուած է «շնորհազարդ վարդապետ Խաչ։ Կեչ»։

²⁾ Ա. Խումբ՝ 1, 2, 5, 6, 8, 10, 12, 13, 16, 17, 19, 33, 40 և 41։

Բ. Խումբ մնացեալ կափաները։

տուր Կեշառուեցին չէր կարող այդ իսկ Բ խմբի
մէջ մաս ունենալ։ Ոճի և ձեի տարբերութիւններն
յառաջ ըերելով, մենք ուզում ենք հասկանալ թէ
յաւելուածիս մէջ ժողոված կաֆաների հեղինակը
մի անձն է թէ մի քանի։ Մեր կարծիքով նոցա
հեղինակը մի անձն լինել կարող չէ։ Սակայն այդ
խնդիրն այն ժամանակ կըպարզուի, երբ գրչեալ
օրինակների մէջ հաւաստի որոշուած լինի իւրա-
քանչիւր կաֆայի հեղինակի անունը։ Հ. Տաշեան,
հիմնուելով ձեռագրների ցուցումների վերայ, 11 կա-
ֆաների լորինումն յատկացնում է Գրիգորիս Աղ-
թամարցուն։ Այդ է, անշուշտ, ամենից ապահով
ճանապարհը կաֆաների հեղինակը ճշտելու համար։

Այլ անգամի թողնելով պարզելու այն խնդիրը,
թէ ո՞ր չափով ազդեցութիւն է ունեցել միջնա-
դարեան հայոց գրականութեան վերայ արևելեան
հարեան ցեղերի, մանաւանդ Պարսից, բանաստեղ-
ծութիւնը, մենք այստեղ կարեոր ենք համարում
լիշտակել, որ Աղէքսանդրի պատմութեան մէջ
կաֆաներ հիւսող երգիչներն, անշուշտ ծանօթ են
եղել Շահնամայի այն մասերին. որոնք վերաբե-
րում են Աղէքսանդրին, նմանապէս և Նիզամիի իս-
քանդար նամային և այլ արևելեան աւանդութիւն-
ների ժողովածուներին, ուստի և կաֆաների ու-
սումնասիրութեան ժամանակ շատ կարեոր է, մեր
կարծիքով, աւելի մօտ ծանօթանալ պարսից բա-
նաստեղծութեանը, որ առանձնապէս ծաղկեցաւ

Ժ—ԺԵ. Դարերում և բաւական տարածուած էր
Փռքը Ասիայի ազգերի մէջ¹⁾:

Յաւելուածիս լուսանցքներում նշանակած
տարբերութիւններն հանել ենք զանազան ժամա-
նակ մեր ձեռքն հասած օրինակներից՝ մեծ մասով
պատահմամբ։ Մեր ժողոված կաֆաները մասամբ
բաղդատել ենք և Ս. Էջմիածնի մատենադարանի
թ. 1751 ձեռագրի հետ։



¹⁾ Դեռ ԺԴ դարում Կոստանդին Երզնկացին իւր
մի ոտանաւորի ծագումն այսպէս է բացատրում. «Այր
մի կայր, ասում է, և Շահնամայ ասէր ձայնով. Նա
եղբարք խնդրեցին, թէ ի Շահնամայի ձայնն մեզ ո-
տանաւոր ասա՞» Ես շինեցի զբանքս զայս. ի Շահնա-
մայի ձայն կարդացէ՞ք»։ Թէպէտև Կոստանդինի ոտա-
նաւորը, լինելով Օքանք յաղագս անցաւոր մեծութեան»,
Շահնամայի բովանդակութեան և նոյն իսկ գեղեցկու-
թեան հետ ոչ մի կապ չունի, բայց և այնպէս մենք
տեսնում ենք, որ Կոստանդին ոչ միայն Փիրդուսու-
տաղաչափութեանը բայց տեղեակ է, այլ մինչև ան-
գամ նորա ձևերին էլ է հետեւում. նա իւր երգն
սկսում է գրեթէ այնպէս, ինչպէս Փիրդուսին իւր
Շահնաման։

(Տե՛ս Բազմավէպ 1866.)

ԱՎԵՔՍԱՆԴՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԿԱՓԱՆԵՐԸ

1. Ով վատշուէր¹⁾ նեկտանեբոս
 Խ. ԿԵ. Որ թագաւոր իր²⁾ լեգիպտոս,
 Ոչ թէ հզօր ձեռամբ արոս³⁾ ,
 Ալլ լականովդ պոտիպոս:⁴⁾
 Փախստական լինիս լաքսորս,
 Գիտակ եղեր տկար և անարոս,
 Զհերդ և զմորուսդ գերծեր⁵⁾ ափսոս,
 Դիմեալ ըամբիշն⁶⁾ Ոլոմալիոս⁷⁾:

—

2. Զլականն եղեալ իւր առաջի,
 Դիւթէր զպատկերն մոմ ի ջրի.
 Զաստուածովն լաղթէր ինքն ի կռուի,
 Առեալ զամուրն եգիպտոսի.
 Ապա լիմարեալ մոգն մոլի,
 Փախեալ լաշիսարհն Պելլոսի⁸⁾:

—

3. Զմըսըր⁹⁾ տուեր, զ՞ առեր, վայ խելաց վա-
 ճառականիդ.
 Զհեր գլխուդ մազ մորուացդ կորուսեր ի մէջ
 քաղաքիդ

¹⁾ Շատշւէր, շատաշւէր. ²⁾ Էիր. ³⁾ Հարոս, հրոս,
 յարոս. ⁴⁾ Լէկէնովդ պոսիպոս, պստիպոս. ⁵⁾ ածես,
 յածես. ⁶⁾ շամբիշն, յամպշիոն, յակիսն, բամբուշն.
⁷⁾ Ուլոմփիաս, Ոլումպիոս. ⁸⁾ Տելլոսի. ⁹⁾ զՄոռուր:

Եւ փախստական եղեր, լուսացեր յարուեստ
ռամիդ¹).

Ահա քեզ ասեմ, գերի, մեռանիս լուսման
քո գործիդ:

4 Ահա ալեօք և շուն մտօք Շուշանալ ծելոցն²)
աւելի.

Գէմ ալդ չէ տեսողի գործ կամ բնաւ իսկ
մարգարէի.

Թէ զիաւիթ ըերես ի մէջ զառակ կնոջն
Ուրիալի,

Նոցա օրինակ բանի վասն յանցման տանըն
իսրալէլի:

5. Ծոյլ և ծանակ աշխարհաւեր,
Որ զեգիպոս շուտ կորուսեր,
Զարքայական թագն թողեր,
Յամօթալեացն³) գիրկ ածեր:

6. Զստուեր երազդ, որ տեսար,
Փիլիպիկ, մոլար և լիմար,
Ոչ թէ տեսել է բնաբար⁴)
Այլ կախարդաց արուեստ և հնար⁵).
Զալդ որ երազդ տեսար,

¹) յըռամիտ. ²) շուշանաց ծերօբն. ³) ամօթ ա-
լեացդ. ⁴) բնաւ բար. ⁵) հունար:

Ի մոգէն տեսլեամբն խաբեցար,
Զկինդ կորուսեր շիւար¹⁾՝,
Ու զրուց շատոց դու եղար:

-
7. Համբեր տուր առնել ոգի, ոչ գիտնան եր-
կիրս հաւասար
Թէ վատ անուն առնուս, և ասեն անուն
քեզ դիժար²⁾).
Օձն է կորստեան պատճառ, որ եհան զԱ-
դամ ի դրախտէն
Հանց նեկտաներոս արաւ³⁾), զկինն եհան ի
Փիլիպպոսէն:

-
8. Մոգն հնարիւք քէնէհարեց⁴⁾).
Զկինդ ի քէն յափշտակեց,
Սպառնալեց ձախնդ լսեց,
Եւ ի վիշապ⁵⁾ կերպարանեց:

-
9. Ի կերպ վիշապի դարձաւ և գոչեաց սաստիկ
մեծաձայն.
Սողաց և ի գիրկն անկաւ, շունչն առնոյը
և զհոտն ի դիմէն:
Օձոյն իսաւիաթն⁶⁾ է շատ թէ քննեն ճար-
տարքն մտով,

¹⁾ շըւար. ²⁾ դիժար, դըժւար. ³⁾ արար. ⁴⁾ քի-
նահարեց, քենէ հանեց. ⁵⁾ հուշափ. ⁶⁾ իսասիաթ, հասիէթ:

Որպէս Մովսէսի եղև գաւազանն ի յօձ դառ-
նալով,
Կամ զպղնձէ օձն ի ձողին ծայրն կախելով,
Որ էր յօրինակ բանին, ի խաչին նո բարձ-
րանալով։

10. Տեսանէ ծերն նա հանջանման ¹⁾)

Նատ աստեղաց ընդհանրական
Նեկտանեթոս այս գիտնական
Վարք և ընտիր այս գործ և ի բան։
Կռենոս ²⁾) բերէ երկնից ըերման
Գիտել զբախտն ծննդեան։

Ասաց թէ ժամ է արձակման,
Ծնանես զարքայն հանդիսական ³⁾)։

11. Կինն որ խալտի ⁴⁾) մեղօք կամ ընկնի ի ճօշ ⁵⁾)
և ի բանբաս,

Պիտի հանց որդի բերէ, զինչ երեր այս Ոլոմ-
բիաս։

Զարքայն արքալից ծնաւ, որ անուն է
Սկանդարիաս ⁶⁾)

Յառիւծ և վիշապ նման, որ եկուլ զերկիրս
անպակաս։

¹⁾) Նահանջ աննման, նահանգանման. ²⁾) Կռաւնոս.

³⁾) անտես անական. ⁴⁾) Խալտատի, սխալի. ⁵⁾) Ճաւշ. ⁶⁾)

Սքանտարիաս։

12. Երանի՞ քեզ Ոլոմպիաս
Մանուկդ քաջ է անպակաս.
Աշխարհակալ¹⁾ լինի անպակաս²⁾.
Մեռանի շուտ և անօրհաս.
Ծնար ծաղիկ տիեզերաց
Ոստ վայելուչ ի լանտառաց
Ինձ քարէ³⁾, ձագ ի լարծուաց,
Առիւծ լագեալ լօժանդակաց⁴⁾:

—

Զուարակագլուխ ձիդ լերիվար
13. Շատոնց ածէ կինծ⁵⁾ և դժար.
Ա՛յ Փիլիպպէ, զալդ որ տեսար,
Տուր ի պահել զընտանաբար⁶⁾.
Դովաւ տիրէ⁷⁾ երկիր երկար
Ծովու ցամքի ընտանեբար:

—

14. Զի, զքեզ գովել կամիմ, ցլագլուխ ծնունդ
δովալին,
Բաշքդ հրեղէն է քո, լանջք ու մէջքդ լա-
ռիւծ նման.
Սմբակդ լօրինուած կազմած՝ հանց ուժեղ
զինչ ուշկապալին⁸⁾

¹⁾ աշխարհուլ. ²⁾ անհաս. ³⁾ ընձուկարէ. ⁴⁾ յուժընդակաց, յաւժընդակաց. ⁵⁾ հինձ. ⁶⁾ զընդան է բար. ⁷⁾ սիրէ. ⁸⁾ ուժ կապարին:

Երանիւ տամ այն բաղդին, որ կառօքդ քո
լարդարին:

15. Արժան և իրաւ է խիստ, դու Մսրայ տէր
Նեկտանեբոս,
Զաթոռդ թողեր անտէր և եկիր առ Ոլոմպիոս
Զանմեղ չարն ի մեղ կալար՝ զԼիբէացի տիպն
Ամոնոս, ¹⁾)
Բայց որ տահրէ ²⁾ զքեզ քո որդին այս
Աղէքսանդրոս:

16. Թէպէտ կարի ուսուցանես,
Աստեղաց ծանօթ զսա առնես,
Նեկտանեբոս, դու զքեզ տեսցես,
Զի ի դմանէ դու զմահ կըես:

17. Տարեալ ընկէց ի խորխորատ
Նեկտանեբոս գործոց ³⁾ արատ,
Եւ ջախջախեաց զոսկերն ի խաղու ⁴⁾
Զխաբող մոգին անարգահատ ⁵⁾:

18. Այս մին բանս լաւ եղաւ,
Որ չարին աղանդն լոյտնեցաւ,

1) Ամանուս. 2) տահրէ, տահրէ, բայց որդ ահ-
ռէ. 3) գործ քոյ. 4) զոսկերսն ի բաղու. 5) անարգ և
նշատ:

Իւր մեղքն զինքն բռնեց,
Կարօտով խաբելն ստացաւ ¹⁾:

—

19. Մայրն Աղէքսանդրու գիտէր,
Թէ չաստուածն ինքն ²⁾ խօսեցաւ,
Հիմայ սևերես եղաւ,
Ի լորդոյն խիստ ամաչեցաւ:

—

20. Ասա՞ ինձ, ով ես դու, չաստուածոց ³⁾ թէ
Գ. ԱԴ. ի մարդկանէ.
Զեքդ հրեշտակի է նման, անվախ երես ⁴⁾
ի ընութենէ:
Առ այս պատասխան երետ Դարեհի այս Ան-
տիգոնէ.
Ես Աղէկսանդրու եմ դեսպան. ազդ առնեմ.
կռուու ⁵⁾ քեզ սարէ.
Ափշել մոլորել ես դու յամէն դիհաց ⁶⁾. գե-
րեցդ արտասուք բերէ.
Քո ամբարտաւան խօսիցդ ինքն դարձ առնէ.
Հպարտ ճօշելոյն ⁷⁾ պատասխան առնէ.
Այն Աստուածն օրհնեալ զքեզ յամօթ առնէ,
Որ զքեզ Աստուած ասէիր հզօր լերկրէ.
ԶԱՍՏՈՒԱԾ չհաւատաս, որ զքեզ ստեղծել է,

¹⁾ սուտ տայ ցաւ. ²⁾ չաստուածն ամոն. ³⁾ յաս-
տուածոց. ⁴⁾ անվախ ես. ⁵⁾ կռուվու. ⁶⁾ դեհ այս.
⁷⁾ ճաւշելոյդ, ճաւշելոյն:

Երկնի և երկրի Աստուածն մեծ է:

21. Այս կեանքս է ի ծով նման, որ մարդիկ ի
ներս կուլողան.

Մարմինս է ի նաւ նման, հոգիս է գանձ
անմահական.

Միտքս է նաւավար ճարտար, որ հանէ զցա-
մաքն լերեան.

Աւաղ թէ կոտրի այս նաւս, մեք ի վար մը-
նամք փոշիման:

22. Զալդ որ բռնեցիր ձեռօքդ ¹⁾, պինդ պահէ
որ զքեզ չհակէ.

Ուղղորդ Աղէքսանդր է դա, հաւատա՛, Դա-
րեհ, դու լսէ.

Մթանս վասն այնոր ²⁾ երեկ, որ ոչ ով ³⁾
զդա ճանաչէ ⁴⁾.

Շատ պատգամ վնաս բերէ, զիւր բանն ինք
հասկցնէ:

23. Ա՛յ ձի ⁵⁾, ինձ աղէկ անես ⁶⁾ զիս ի լախ
երկրէս խալիսես.

Ոռնուս և իմ ⁷⁾ հեծելն երթաս, Դարեհն
ի զօրաց ազատես ⁸⁾.

¹⁾ ձեռամբ. ²⁾ այնոր. ³⁾ որ ոչ. ⁴⁾ չճանաչէ. ⁵⁾ ձին.

⁶⁾ եղեր, առնես. ⁷⁾ առնես յիշ. ⁸⁾ Դարեհի զօրացն
ազատես, ՏԱՐ. — և ի յանհուն գետէն զիս հանես:

Զամենայն օր մանուշակ ¹⁾ տամ քեզ Հազըէ
վարդ զինչ որ դու ուտես.

Ու Փառք Արարչին տամ քո, որ լաշխարհս
ընտիր, ուժով ²⁾ ես:

—

24. Կարեհս լիմ արիւն ընկալ, ինձ կրակ անշէջ
Գ. Աղ. վառեցի.

Անցած գնացած բաներ հին ու նոր հեծել
զուգեցի,

Գէմ ³⁾ խօսքն է մաթալ քերած՝ ասած է
խիստ խելօքի,

Թ՛իւը ձեռով ⁴⁾ ածած մոխիրն ի գլխոյն
իսկի չժափի:

—

25. Արի և քաջանց նման որ չկալ լաշխարհս ի
քեզ նման.

Փառք այն Արարչին ասեմ, որ երետ քեզ
խելք աննման.

Թէպէտ փոխեցեր զանունդ և առեր ձեւ ծա-
ռայական,

Կանդուլէ կարծես առեալ ծունտը ածէ քեզ
արքայական:

Թէ ազատեցիր զհինն, անցուցեր զսէրն ե-
րախտական ⁵⁾

¹⁾ զամէն, մանուշակ. ²⁾ և ուժով. ³⁾ բէմ. ⁴⁾ ձեռօք,
ձեռաց. ⁵⁾ զսէրն իւր ախտական:

Դա առ քեզ ծառալ գրուի ու տանի մօրն
իւր յանդիման ¹⁾)

Հանց տուրս և խիլալ առնէ, ոնց որ վալել
է քեզ տիրական:

Առ Աստուած ումէտ ունիմ իւր անունն ա-
հեղ վերնական.

Իմաստիւ խրատ ²⁾) տալ ինձ, որ չգառնամ
ի յետ փոշիման.

Զանամ թէ կարեմ իսկի ազատեմ զհարսն
տիրական,

Զմալըն քո ուրախ առնեմ՝ զկանդակէ տի-
կին աննման:

Յորժամ տեսանէ զհարսն իւր, նա խնդալ
սրտիւ լիական ³⁾):

26. Ա՛լ իմ անման սուլթան, քո աւուրքդ ⁴⁾) ու
կեանքդ երկարի

Դու հանց թագաւոր լինիս, որ ամէն աշ-
խարհս հաւանի.

Թէ ազատեցիր զկինս, անցուցիր զհուրն
սրտի,

Զի լԱստուած լոյս ունիս, թող ամէնն բա-
րով ⁵⁾) կատարի:

¹⁾) յանդուման. ²⁾) իմաստ և խրատ. ³⁾) լի ա-
կան. ⁴⁾) արեդ ու ⁵⁾) բարին:

27. Վայ այս Պովըռսի¹⁾ ասեմ, որ ունէր զՆըն-
դուստան բոլոր.²⁾

Հանց ոսկի աթոռ ունէր, որ չունէր ոչ
ոք³⁾ թագաւոր.

Դատ մի պարոնայք և իշխանք յափս ու-
նէր⁴⁾ զինչ հատ մի խնձոր,

Ֆալաքն⁵⁾ երբ ի սիրտ ելաւ, լուկ արար⁶⁾
զինքն երկու կտոր:

—

28. Այս բռնաժանի⁷⁾ գազանս յօրինակ է սա-
տանալի,

Որ յանկարծակի հասեալ, շատ արար ա-
րեան ճապաղի.

Ամբոխն դըղըրդ առեալ⁸⁾, միջեցին բոլոր
բանակի,

Եւ նետիւ հարեալ, որով խողիսողեալ բար-
ձին ի միջի:

—

29. Այ քալիկ⁹⁾ լըրիկ ւամագունիկ լեշկատ¹⁰⁾
պառուիկ,

Մատակ դեսպան, դու ոնց իշխես խօսել
դմա առաջի.

Դու կացնակդ¹¹⁾ ի յուսիդ, ձեռօքդ¹²⁾ առ-
նես դու:

—

¹⁾ Պիւրոսի. ²⁾ զՆդիկս բոլոր. ³⁾ ոչ մի. ⁴⁾ յափն
ունէր. ⁵⁾ ֆէլէքն. ⁶⁾ լոկ արար. ⁷⁾ բռնաժանի. ⁸⁾ ամ-
բոխն գովով գեղեալ. ⁹⁾ ո՛ քալիկ, — հալեկ. ¹⁰⁾ լեշ-
կատ, ¹¹⁾ դուկացինակդ. ¹²⁾ ձեռամբ:

30. Ա՛յ իմ խօսուն փոքրիկ հաւիկ, մին ասա
զքեզ աղաչեմ.
Իմ կեանքն է քանի տարի, լերկարի թէ
շուտով մեռանիմ:
Ասաց: Շտապէ շուտով, քեզ տեսալ, ահա
քեզ ասեմ.
Ի ծանօթ երկիր գնա, զի քո մահն ես ծած-
կելու չեմ:

-
31. Գալաք, որ զանմիտ մարդն լաստըւորս¹⁾
առնես փառաւոր.
Եւ զայս գաւառաց արքայս կուտանիս ի
գետն մոլոր.
Ողորմ ու լալի արքայ, որ քաջանց²⁾ էիր
պարապար.
Զէտ չորքոտանի ի քարշ կուգնաս անհան-
դուրժաբար:

-
32. Աւաղ զիմ աւուրքս ու կեանքս, որ անցաւ
նման երազի.
Այս իմ լիալիր ճակատս ծրաբեալ ի վարշա-
մակի.
Աչերս իմ ծովածաւալ³⁾ ի լուսոյն ալժմիկ
նուաղի.

¹⁾ աստ ի նորա. ²⁾ քաջ արանց, քաջազանց. ³⁾ ծիածաւալ:

Իմ կարմրացեալ երեսս դեղնացեալ գոյնն ¹⁾

թառամի:

Զօրութիւն բազկիս բարձաւ, թուլացաւ
մէջքս իմ առիւծի,

Գարշապատ լուշկապարաց ²⁾ կանգնելոյ ան-
գամ կարօտի.

Չորից բազկացեալ մարմինս ալժմ էհաս ժամ
որ լուծանի.

Անմահ անարատ անեղծ դու միայն ես տէր
կենդանի.

Իմ սննդակից եղբարք ու ծանօթ մակեդո-
նացիք

Ի մարտս պատերազմաց զօրաւոր հզօր և
արիք,

Այսօր էր անհոգ էք դուք, որ ես ի յայս
կէտն կամ.

Ինձ ճարակ ու հնար տեսէք ³⁾, արքայիս
ձեր էր չողորմիք:

33. Չուր ինդրեաց ի զովացումն

Առ ի լերդին իւր տոչորումն,

Ուղղոս կրկին դեղ արբուցումն

Մատուցանէ ապահովումն.

Եւ ընդ հոսելն ի բերանումն

Կտրեաց զաղիսն լորովայնումն:

—

¹⁾) Դեղ ու գոյնն. ²⁾) ուշկապարին. ³⁾) արէք:

34. Անբախտ կարի խիստ լըթիս, միթէ ծը-
նունդ ես սատանալի.

Զայդ աշխարհակալ պարոնդ կուտեղես ողորմ
ու լալի.

Ուղղոս չես գործել բարի, դու կցորդ ես
սատանալի.

Յաշխարհս երերուն կենաս, անիծեալ զա-
ւակ Կայենի:

35. Հիւանդիս Աստուած դեղ է, որ մահու տէր
Խ. ԿԵ.

Հեքիմն այլ սէպապ ասեն, խելօքնուն է
բանս ասացած.

Թէ զճալինոսն ասեն և զլոխման բազմաց
վկալած,

Հրամանն ի վերուստ պիտի, որ օգնէ բժիշկն
գոված:

—

36. Մարք մանկագունից լացէք, վայ տո՛ւք
թշուառականիս, ¹⁾

Որ փառաց ²⁾ թափուր եղէ, խաւարի աչեր
ծնողիս.

Արևն իմ շուտով մտաւ ³⁾, քաղեցաւ շունչս
իմ ու հոգիս.

Ծառս ծաղկաթափ եղէ, ⁴⁾, անպտուղ կամ
ի յաշխարհիս:

1) Ինձ. 2) Ի փառաց. 3) մարաւ. 4) ծաղկաթափ
ծառ լինիմ:

ԱՇ իմ միամօր որդի, Աղէքսանդր հզօր մեծ
արքայ. Զեղէ արժանի տեսոլդ, վայ մօրս քո Ոլոմ-
պիալ¹⁾ Ոչ բան մի բերնէդ լուալ, թէ սրտիս մէջն
կայ եարալ,
Քո ցաւուդ ես դեղ առնէի կամ հէքիմ բե-
րէի բեջարալ²⁾:

—

37. Իսքէնդէր արքայից արքայ, որ ամենի քա-
ջը³⁾ լաղթեցեր:
Յարևմտից դուրս ելեալ, զերիվարաւդ մտրա-
կեցեր,
Ի լելս արեու հասար, եւ ես եղէ կին հզօր
մեծ կայսեր,
Ալժմ լուռ և եթ կաս դու, ճարտասան,
ընդէր լռեցեր⁴⁾:

—

38. Վաղեցէք ի տունն⁵⁾ պարսից և ասացէք
Գ. Ա. Դ. հօրն իմոլ Դարեհի.
Դուստրն քո եղուկ դարձաւ և լալոյ եղև
արժանիւ
Եթող զիս անտէր այսօր իսկէնտէր⁶⁾ ար-
քալն հըշշալի.

¹⁾ Ուլումպիադայ. ²⁾ բե չարայ. ³⁾ ամեն քաջի,
ամեհի քաջաց. ⁴⁾ լուռ եղեր. ⁵⁾ դուռն ⁶⁾ Աղէքսանդր:

Ի հող և ի տապան իջնու ալսօր, որ¹⁾ ա-
զանցն է սարսափելի:

Ի գնալդ քո յերկիր հեռի գալստեանդ ես ակն
ունէի.

Ալդ քո սոսկալի²⁾ սիրոյդ տառապեալս չեղէ
արժանի.

Մահու պատշաճ չէ իսկի թէ կայսեր կին ալ-
լում լինի,

Ես ալլ հետ քեզ մեռանիմ, իմ փառք ու
պսակ պանծալի:

39. Արքայս ի տապանի եկն, որ ունէր շատ մի
Գ. Աղ. Հալըբնիք.

Նա պառկեր է ի թիզ մի տեղ, որ ունէր
աշխարհս ի ձեռին³⁾

Իւրմէն ես հարցուկ⁴⁾ եղայ, թէ ալդ տեղդ
ողպէս է քեզի,

Դարձաւ ու ջէւապ⁵⁾ տուեց թէ Հերիք է
և շատ աւելի.

Աւուրքս էր ի շուք նման կամ ստուեր ե-
րազի նման.

Ծաղիկ էր գարնան նման մանուշակ կամ
վարդի նման:

Հալեցար մոմի նման ու շիջար կըակի նման.

1) իջնու այն որ. 2) սոսկ աղի. 3) որ աշխարհս
եկն ունէր. 4) հարցունիք, 5) ճաւապ:

Մտնուս յարեռու նման ու ի հող ի զնդան:
ինձ հանց ¹⁾ ուժ ու թև պիտէր, թռչէի
զինչ հաւ թևաւոր.

Հեղ մի ի լիմ քաղաքս երթի, տեսնէի ²⁾
զմալըն փառաւոր.

Միթէ շիջանէր ³⁾ այս հուրս, որ ի լիմ
սիրտս ⁴⁾ է կոկծաւոր,
Որ զիս ի ղաֆաս ⁵⁾ ածեր, կուխալթէ ⁶⁾
զինչ ⁷⁾ օձ թռւնաւոր:

40. Այս է հրաշք որ երևեցաւ.
Օդն շամանդաղ և խաւարաւ.
Ապա փալլակն ի ստոր անկաւ
Եւ ի ծովին անյալտացաւ:
Արծիւն առեալ և վերացաւ.
Աստղանման զհոգին տարաւ.
Բաբելոնի պատկերն անկաւ
Եւ դողալով տատանեցաւ.
Արքայն էհան դշունչն ու մեռաւ.
Եւ յօդն ի յօդն ցնդեցաւ:

41. Դադարեցար Աղէքսանդրէ.
Հանգեաւ աշխարհս ի դողմանէ.

¹⁾ անձն. ²⁾ և ի յիմ քաղաքս երթեալ տեսանէի. — հաղ մի. ³⁾ շիջանի. ⁴⁾ ի սրտէս իմ. ⁵⁾ երբ ի ղաֆէս. ⁶⁾ կու խոցէ. ⁷⁾ ինձ:

Զերծաւ կօշիկդ ի լըռքեկէ
Թողթի եղև ձեռաց բազկէ.
Ընտիր գոված և երեսբախտ,
Մեծ հանճարեղ և ամենամարտ,
Հմտագունից պարծանք և զարդ
Արիասիրտ և միշտ զուարթ:
Քո սէրդ ի սիրտ եղև մակարդ,
Զինչ որ ձուկն ընկնի ի կարթ,
Արև պայծառ զէտ վարդ,
Քո մանկութիւնդ միշտ զուարթ¹⁾:

—
42. Այս կեանքս է լերազ նման, զինչ զարթնու,
լինի փոշիման.
Ի քուն զինքն իշխան գիտէ, երբ զարթնու,
աղքատ է և անբան.
Թէ քաղցել է, հաց տեսնու. լրջանալ, կա-
րօտ և անպիտան:
Այսպէս Աղէքսանդր եղի, որ մտաւ ի նեղ
գերեզման:

—
43. Այս է Մակեդոնեան հզօր Աղէքսանդր հե-
ծեալ լերիվար.
Փողիցն հրաման երետ հարկանել զերգն
աղմկարար.

1) Համեմատէ՛ և տես շարունակութիւնը 8ուց.

Հայ Զեռ. Ներս. Դպր. 10:


Զառչին այլ է մէջ անցաւ, ազդ առներ գօ-
րացն անմոլար.
Զսուրն է հաներ արքայն, դուք ընդէր
կայք հանց կամկար:
Երբ լսեցին զպատերազմին զձայնն փողոյ
ազդել խմբին,
Վառեալ զալամ սպառազինին, ըռումբք
դրօշակք անտառ մալրին.
Շող և փայլիւն շատ սուսերաց զըահիւք
պողփայլ ստղաւարտին:
Քաջ և արիքն պնդէին, և սիրտք վատուց
ճմլեալ կալին¹⁾


—
44. Նախախնամութիւն վերին դու շարժող
Գ.Ա.Ղ. երկնից կամարին
Մի և անկարօտ անմահ անորակ անձն ան-
մարմին,
Եւ հրամանաց քոց ահեղ ամենայն եղեալք
հնազանդին,
Անշունչ անհոգի ծառերս բանական ձայնիւ
կուխօսին²⁾:



¹⁾) Տե՛ս Հ. Ալիշան, Սիսուան, 400, ձն.

²⁾) Տե՛ս Ցուցակ 2եռ. Ներս. Դպր. 10:





եր.	7	վերտառութիւնը	կարդա	գրիգորիս
	նոյն	մի	—	մի
	նոյն	բո	—	բոհ
եր.	8	խթալեցի	—	խթայեցի
եր.	12	չըտուող	—	չտուող
եր.	14	ոգենորոնիմ	—	ոգենորոնիմ
եր.	16	կըտեսնենք	—	կըտեսնինք
եր.	28	սգալից	—	սգակից
եր.	38	թարոնը	—	թափոնը
	նոյն	ջար եւ ֆիղան	—	ջար եւ ֆիղան
եր.	41	զհազրէ վարդն	—	զհազրէ վարդն
եր.	43	այլոնի	—	այլոնի
եր.	46	բիւն	—	բուն
եր.	47	մուշառւլուխ	—	մուշտուլուխ
եր.	49	կըֆտանա'	—	կըֆտան ա'
եր.	54	ի յետ	—	ի հետ
եր.	57	տղինան	—	տղինան
եր.	59	1595	—	1695
	նոյն	այն	—	այս
եր.	61	ֆիրդա	—	ֆիրդան
եր.	63	բարա հար	—	բարբահար
եր.	65	բասան	—	բասան
եր.	67	շափի	—	շաքի
եր.	68	եղեն	—	եղին
եր.	70	ֆլոդան	—	ֆլուծան
	նոյն	շիհի	—	զիհի
եր.	71	բոնը	—	բար
եր.	76	ի վաղօրդ այնէ	—	ի վաղորդայնէ
	նոյն	հիրեկ	—	հիրիկ
եր.	83	դէմ	—	գէմ
եր.	85	ծառայ	—	շիք
եր.	87	տացնլ	—	տսել
եր.	108	ջաստուածովն	—	ջաստուածովն
եր.	111	նու հանջանման	—	նահանջանման
	նոյն	շար	—	շար
եր.	116	իարծես	—	իարծիս
եր.	118	ամացունիկ	—	ամազունիկ
	նոյն	որով	—	սրով
եր.	120	գարշապատ	—	գարշապար
եր.	121	կոհոտեղես	—	կոհ դեղես:

ԳԱԱ ՀԻՄՅԱՐԱՐ ԳԻՒ. ԳՐԱԴ.



FL0080332

[8m.]

Upmz
273